Ազգ
Azg
10-16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 035(5859)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Աքսել Ֆիշերի պաշտպանական կողմի ցանկությունը դատավարության ձգձգումն է

Բունդեսթագի նախկին պատգամավոր, Ադրբեջանից 2016-ին 21.800 եվրո կաշառքի դիմաց նրա շահերի սպասարկու քրիստոնյա-դեմոկրատ **Աքսել Ֆիշերի**՝ 2025-ի ապրիլին անջատված մասով դատավարությունը հոկտեմբերի 6-ին վերսկսվելուն պես կրկին հետաձգվել է: Ֆիշերը ներկայացել է կես ժամ ուշացումով, իսկ նրա կինը, որ վերջինիս շահերի պաշտպանն է, չի ներկայացել՝ պատճառաբանելով, թե ծանուցումը չի ստացել: Կոռուպցիայի դեմ պայքարի Թրանսփերենսի կազմակերպությունը տագնապ է հնչեցնում, քանի որ նկատելի է Ֆիշերի պաշտպանական կողմի՝ դատավարությունը ձգձգելու մարտավարությունը, նպատակը՝ վաղեմության ժամկետի ավարտը: Մյունխենի երկրամասային գերագույն դատարանը խորհրդակցությունից հետո ստիպված է եղել հետաձգել նիստը: Առաջիկա նիստը հոկտեմբերի 20-ին է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Երբ դատական համակարգը գործում է արդար

Դժբախտաբար վերնագիրս չի վերաբերում մեր երկրին, այլ՝ Մ. Նահանգներին, նրա դատավորներին, դատական համակարգին, նախագահ Թրամփին, որ վերջին շրջանում շեղվածության նշաններ է ցույց տալիս, մի քիչ էլ՝ նիկոլականությանը:

Նկատե՞լ եք,- հարց են տալիս բախտագուշակները մեզ,- որ Նիկոլ Փաշինյանը ո՛ր երկրի կամ պետության ղեկավարի հետ հանդիպի, դժբախտ բան է պատահում տվյալ անձին, տվյալ պետությանը: Նա եղավ Վատիկանում, հանդիպեց Ֆրանցիսկոս Պապին, ու մեկ ամիս չանցած վախճանվեց վերջինս: Նիկոլը սերտացրեց հարաբերությունները Ֆրանսիայի նախագահ Էմանուիլ Մակրոնի հետ, եւ քիչ անց, հերիք չէ, որ կառավարական տագնապների մեջ հայտնվեց այդ երկիրը, Մակրոնը հրապարակավ ծեծ կերավ Առաջին տիկին Բրիժիտից, ինչը առիթ տվեց ֆրանսիական մամուլին եւ օտարազգի լրատվամիջոցներին՝ քահ-քահ ծիծաղելու Նիկոլի ընկերոջ վրա:

Իսկ ինչ վերաբերում է նախագահ Թրամփին,- շարունակում են նույն բախտագուշակները,- վերջինս իր գրասենյակում Նիկոլին ու Ալիեւին ընդունելուց անմիջապես հետո, ինչպես պնդում են չար լեզու վարակաբանները, մեր վարչապետը վարակել է նախագահ Թրամփին սահմանադրություն եւ օրենք չհարգելու վարակով:

Նման մարդկանց համար թուրքերն օգտագործում են «ուղուրսուզ» արտահայտությունը, այսինքն մարդ՝ որը «ուղուր» (բախտ, հաջողություն) չի բերում:

Դա մենք գիտենք: 2018-ից ի վեր այդ մարդը Հայաստանին ու հայությանը «ուղուր» չի բերում: Ընդհակառակն՝ միայն պարտություն, զոհեր, կորուստներ, անհաջողություն, նսեմություն:

Իսկ բախտագուշակներին ուղղված իմ հարցին, թե տարօրինակ է, որ Նիկոլի հանդիպած ու շփված անձանցից՝ Իլհամ Ալիեւ, Ռեջեփ Թայիբ Էրդողան եւ ուրիշներ, ոչ մի թուրքի կամ թյուրքի հետ ինչո՞ւ «ուղուրսուզ»ության ոչ մի դեպք չի գրանցվում, «Երեւի, Կովկասի գլխավոր մոլլա Ալահշյուքյուր Փաշազադեն այնպիսի մի չարխափան թալիսման է զետեղել Իլհամի ծոցագրպանում, որ ոչինչ չի պատահում նրան, առայժմ», եղավ նրանց պատասխանը:

«Համենայնդեպս, ասացին նրանք, մի օր այդ թալիսմանը անզոր կդառնա, եւ ազերիները, Չարենցի խոսքը կրկնելով՝ նրան կասեն՝ «Մոլլա, ուզո՞ւմ ես սիլլա»...

Իսկ ինչ վերաբերում է Դոնալդ Թրամփին, որը մեկ ամիս առաջ Վաշինգտոնի իր գրասենյակում ընդունել էր Նիկոլին՝ Իլհամի հետ, ձեռքը սեղմել նրա, ըստ երեւույթին, ինչպես ասվեց, վարակել է նախագահ Թրամփին:

Ահա թե ինչու Թրամփը վերջին շրջանում նիկոլական մեթոդներ է կիրառում իր երկրում, մեթոդներ՝ որոնք բնավ չեն կիրառվել նախկին նախագահներից ոչ մեկի կողմից: Արդեն 3-րդ ամիսն է, որ նա, սկսելով Կալիֆոռնիայից, մաքսատուրքային ընդվզումները զսպելու անվան տակ Ազգային պահակազոր (National guard) է ուղարկում տարբեր նահանգներ ու քաղաքներ՝ նույնիսկ Վաշինգտոն, Չիկագո եւ, օրերս, Պորտլենդ: Բոլորն էլ, ուշադրությո՛ւն, Դեմոկրատական կուսակցության անդամ նահանգապետերով ու քաղաքապետերով կառավարվող:

Եվ Ամերիկան Ամերիկա չէր լինի, եթե դատաիրավական ողջ համակարգը ոտքի չկանգներ: Ախր Մ. Նահանգների սահմանադրական օրենքով չի թույլատրվում որեւէ իշխանության, նույնիսկ՝ նախագահին, առանց տեղական նահանգային կամ քաղաքային իշխանությունների հրավերի զինվորական որեւէ ուժ ուղարկել խնդրո առարկա երկրամաս, շրջան ու քաղաք:

Եվ հենց դա՛ էր պատճառը, որ անցած կիրակի օրը դատարանը օրենքից դուրս եւ անօրինական հռչակեց նախագահի որոշումները ու պահանջեց իրենց զորանոցներ վերադարձնել զինված ուժերին:

Ստացվում է, որ Մ. Նահանգներում չկան «վնգստացող դատավորներ», հրաման կատարող Արմեն Դանիելյաններ, Արմինե Մելիքսեթյաններ, Սրբուհի Գալյաններ ու նրանց նմանները:

Երբ որեւէ երկրում գործում է արդարության եւ օրենքի վրա հիմնված դատական համակարգ, այդ երկիրը կլինի ուժեղ, ամուր եւ բարգավաճ, որքան էլ որ դժբախտաբեր նիկոլականությունը թափանցի այնտեղ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Ընդարմացում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ժամանակին սոցցանցերում գրել էի Մալթայի ուխտի խաչի հետնապատկերով ուղիղ եթեր մտած մեկի մասին, որ ստանձնել էր ընդդիմադիր քաղաքականի դերը եւ դա իրացնում էր առավելագույն ջանքով: Անուն չէի նշել, քանի որ ամենախոս այդ ընդդիմադիրի կերպարն այնքան ակնհայտ նկարագիր ուներ, որ անուն տալու կարիք չկար: Ի զարմանս՝ ինձ պատասխանել էր լրիվ այլ մարդ, որի տեսանյութերը ես չեմ նայում, բայց դատելով նրա թիկունքում միշտ ակնառու Մալթայի խաչից, նա՛ էր իմ ասածն առել իր վրա ու պատասխանել: Հայաստանում, ուրեմն, այնքան են ներկայացված ամեն տեսակ մասոնական կամ նմանատիպ օթյակները, աշխարհի խառնակիչների այլ բազմազան կառույցների ազդեցության գործակալները, լրտեսներն ու նրանց շահերը սպասարկողները, որ քարը մեկի բոստանն ես գլորում, ճանապարհին ուրիշ երկուսի է գնում -կպնում:

⇨2

## Ջոն Այբներ. «Չկա արդարություն, չկա խաղաղություն»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

***«Ազգ»-ում» բազմիցս գրել ենք ԼՂ խաղաղության շվեյցարական նախաձեռնության կարեւորության եւ աճող դերի մասին, շեշտել, որ այն ունի միջազգային լայն աջակցության կարիք: Մեր թերթի հուլիսի 25-ի համարում վերնագրել էինք «Ե՞րբ է Գերմանիան միանալու այդ նախաձեռնությանը»: Այն, որ հոկտեմբերի 8-9-ին Շվեյցարական նախաձեռնությունը հաջողությամբ հանդիպումներ գումարեց Բեռլինում, իրականացավ այդ նախաձեռնության կայուն սատարողի՝ Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության(CSI) եւ Գերմանահայոց կենտրոնական խորհրդի (ZAD)-ի միասնական ջանքերով:*** «Մարտահրավերներ եւ ուղիներ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկարաժամկետ խաղաղության համար» վերնագրյալ երկօրյա միջոցառումներից առաջինը գումարվել է հոկտեմբերի 8-ին Բեռլինի ավետարանական ակադեմիայում, երկրորդը՝ հաջորդ օրը Բեռլինի Hertie School հանրային կապերի եւ կառավարման բարձրագույն դպրոցում: Երկօրյա միջոցառումներին ելույթ են ունեցել Շվեյցարական խաղաղության նախաձեռնության կոմիտեի անդամ, Շվեյցարիայի խորհրդարանի պատգամավոր **Էրիխ Ֆոնթոբելը**, Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության նախագահ **Ջոն Այբները**, նույն կազմակերպության ներկայացուցիչներ **Ջոյել Ֆելդքամփը, Փեթեր Ֆուքսը**, իրավապաշտպան **Թեսսա Հոֆմանը**, ԳԿԽ նախագահ **Յոնաթան Շպանգենբերգը**, իսկ տեսակապով՝ ՄՔԴ-ի նախկին դատախազ **Լուիս Մորենո Օկամպոն**, Արցախի համայնքի ներկայացուցիչ **Արտակ Բեգլարյանը**: Նախապես ծանուցվել էր ՄԻՊ նախկին պաշտպան **Արման Թաթոյանի** Բեռլինում ելույթի մասին, բայց վերջին պահին Թաթոյանը այցը չեղարկել էր:

Երեկ մեզ հետ հեռախոսազրույցում ԳԿԽ նախագահ Յոնաթան Շպանգենբերգը հաղորդեց, թե «հանդիպումներն հաջող են անցել: Շվեյցարական նախաձեռնությունը ծանոթացրել են Ավետարանական ակադեմիայում ներկա գերմանական հասարակական տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների, պրոֆեսորադասախոսական շրջանակների: Ներկաները հետաքրքրությամբ լսեցին: Կառավարման եւ հանրային կապերի Hertie School-ում էլ կարեւոր է, որ տեղյակ լինեն ԼՂ հիմնահարցին, Շվեյցարական խաղաղության նախաձեռնությանը»: Շվեյցարական նախաձեռնությունը, Արցախի հայերի իրավունքների, պատանդների եւ ռազմագերիների հարցերը ներկայացվել են նաեւ Բունդեսթագի տարբեր կուսակցությունների՝ մասնավորապես ՔԴ-ՔՍ միության, ՍԴԿ, Կանաչների ներկայացուցիչների հետ հանդիպմանը, ասաց ԳԿԽ նախագահը՝ փոխանցելով, թե քաղաքական ուժերի հետ հանդիպումները դեռ չեն ավարտվել, օրակարգը ծանրաբեռնված է, իսկ գերմանացիներն առավել հետաքրքրված են, թե Ֆրանսիան ի՞նչ դիրքորոշում կորդեգրի:

Քրիստոնեական համերաշխության միջազգային կազմակերպությունն իր կայքում անդրադարձել է Բեռլինի Ավետարանական ակադեմիայում կազմակերպված հանդիպմանը: Տեղի սղության պատճառով հպանցիկ անդրադառնանք: CSI-ի Գերմանիայի գործադիր տնօրեն հայր Պետեր Ֆուքսն իր ելույթն ագուցել է «Խաղաղությունը՝ որպես արդարության արգասիք» քրիստոնեական սոցիալական ուսմունքի վրա:

⇨3

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Թյուրքական պետությունների կազմակերպության 12-րդ գագաթնաժողովի ուղերձները

***Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Իրանի հռչակած շիա իսլամական քաղաքակրթական ազդեցությանը հակազդելու նպատակով Անկարան օրակարգ է մտցնում թյուրքական միասնական ինքնության գաղափարախոսությունը:***

Հոկտեմբերի 7-ին Ադրբեջանի Գաբալա քաղաքում մեկնարկեց Թյուրքական պետությունների կազմակերպության գագաթնաժողովը, որին մասնակցում էին Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը**, Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**, Ուզբեկստանի նախագահ **Շավքաթ Միրզիյոեւը**, Ղազախստանի նախագահ **Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը,** Ղրղզստանի նախագահ **Սադիր Ժապարովը**, Հունգարիայի վարչապետ **Վիկտոր Օրբանը**, Թուրքմենստանի ժողովրդական խորհրդի նախագահ **Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը** եւ ինքնահռչակ «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» նախագահ **Էրսին Թաթարը**:

Իլհամ Ալիեւն իր բացման խոսքում ընդգծեց, որ այս կազմակերպությունն այլեւս միայն համագործակցության հարթակ չէ, այլ դառնում է աշխարհաքաղաքական լուրջ կենտրոններից մեկը:

Խոսելով կազմակերպության դերակատարության աճի՝ իր պատկերացրած պատճառների մասին, Ալիեւը կարեւորել է անդամ երկրների քաղաքական եւ տնտեսական կայունության, աշխարհաքաղաքական դիրքի, երիտասարդ բնակչության, բնական ռեսուրսների աճող ռազմական ներուժի գործոնները:

Ադրբեջանի նախագահը, որ վերջերս Հայաստանի հետ Վաշինգտոնում խաղաղության հռչակագիր է նախաստորագրել, իր ելույթում ռազմական ուժը ժամանակակից աշխարհում գնահատել է որպես յուրաքանչյուր երկրի անկախության եւ տարածքային ամբողջականության հիմնական երաշխիք եւ մեծ կարեւորություն տվել անդամ պետությունների ռազմական եւ պաշտպանական համագործակցությանը: Սակայն բանախոսն իր թյուրքախոս ունկնդիրներին չի ասել, որ դեմ է հայկական կողմի զինվելու փորձերին ու պաշտպանական կարողությունների հզորացմանը միտված ջանքերին:

Նա հիշեցրել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում միայն Թուրքիայի հետ անցկացվել է ավելի քան 25 համատեղ զորավարժություն եւ հետեւություն արել, որ անհրաժեշտ է 2026-ին Թյուրքական պետությունների կազմակերպության անդամ երկրների միջեւ Ադրբեջանում անցկացնել առաջին համատեղ զորավարժությունը: Կարելի է չկասկածել, որ Ալիեւի առաջարկությունն ընդունվելու դեպքում պայմանավորվածությունը ձեռք կբերվի առաջին խորհրդանշական համատեղ զորավարժությունն անցկացնել հենց օկուպացված Արցախում:



Իլհամ Ալիեւը գագաթնաժողովին արտասանած իր ելույթում՝ հաշվի չառնելով «Թրամփի ճանապարհի» մասին նախաստորագրված խաղաղության հռչակագրի մյուս կողմի՝ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** եւ կոպենհագենյան հանդիպումից հետո նաեւ նրա խոսնակ **Նազելի Բաղդասարյանի** հնչեցրած մտահոգությունները, կրկին անդրադարձել է «Զանգեզուրի միջանցքի» գործարկման աշխարհաքաղաքական նշանակությանը եւ այդ հարցում իր գործադրած ջանքերին՝ այն ներկայացնելով որպես «Հայաստանի ինքնիշխան տարածքով անցնող թյուրքական աշխարհի կենսական տրանսպորտային ուղի»:

Ալիեւը ԹՊԿ գագաթնաժողովի ընթացքում, ակնարկելով ԼՂ հայ բնակչության տեղահանման «ավարտը», նաեւ հայտարարել է, որ նախկին հակամարտության մնացորդները վերացվել են: Բանախոսը շնորհակալություն է հայտնել «եղբայրական երկրներին»՝ Ղարաբաղում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերին ակտիվ ներգրավվածության համար:

Միասնական այբուբեն ստեղծելու մասին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ Թյուրքական պետությունների կազմակերպության գագաթնաժողովին ներկայացրած առաջարկը, որն արձանագրվել է նաեւ միջոցառման ընդունած եզրափակիչ փաստաթղթում, մի քանի առումներով ունի հեռանկարային եւ ռազմավարական նշանակություն: Առաջին հայացքից հումանիտար թվացող այս նախաձեռնությունը կրում է քաղաքական, մշակութային, տնտեսական եւ աշխարհաքաղաքական ենթատեքստ:

Այսպիսով, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Իրանի հռչակած շիա իսլամական քաղաքակրթական ազդեցությանը հակազդելու նպատակով Անկարան օրակարգ է մտցնում թյուրքական միասնական ինքնության գաղափարախոսությունը:

Միասնական այբուբենը կարող է դառնալ նաեւ քաղաքակրթական միավորող գործոն, որը կնպաստի թյուրքալեզու ժողովուրդների միջեւ մշակութային հաղորդակցության ամրապնդմանը:

Այս քայլը միտված է խորացնել թյուրքական ինքնության համատեղ ձեւավորումը, ինչը կարող է նպաստել Էրդողանի քարոզած «Թյուրքական աշխարհի միասնության» գաղափարախոսությանը:

Եվ քանի որ առաջարկը ներկայացվում է Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից, նշանակում է, որ Թուրքիան թյուրքալեզու երկրների ինտեգրման գործընթացում ցանկանում է ստանձնել նախաձեռնողի եւ առաջնորդի դերակատարություն:

Եվ վերջապես, ԹՊԿ-ի Գաբալայի գագաթնաժողովը, հակառակ իր պաշտոնական խաղաղասիրական հռետորաբանությանը, ներկայացրեց հստակ աշխարհաքաղաքական օրակարգ, որը թիրախավորում է նախեւառաջ Հայաստանի եւ Իրանի շահերն ու անվտանգությունը: «Զանգեզուրի միջանցքի» իդեալիզացումը, մշակութային վերակազմավորումը, ռազմաքաղաքական համախմբումն ու տնտեսական նախագծերը վկայում են տարածաշրջանում ուժերի նոր վերադասավորման փորձի մասին, որի առանցքում թյուրքական աշխարհն է՝ միատարր աշխարհաքաղաքական ծրագրով:

# Ընդարմացում

⇨1 Եւ երբեմն տեսողական ուշադրության դաշտը լայնացնելով՝ ամեն ինչի մեջ այնպիսի սիմվոլիկա ես հայտնաբերում, որ սկսում ես կասկածել, թե մեր հրապարակային կյանքը շիրմա է միայն՝տակից ընթացող իրական գործընթացները ծածկող, որ չեն բխում մեր երկրի ու մեր պետության շահերից: Իսկ այդ գործընթացները նկատելու համար պետք է ունենալ քննական հայացք, գիտելիքներ, պատմության եւ պատմական իրողությունների իմացություն, աշխարհափոխման ներկա փուլի վտանգներն ու մեր շահերի դեմ ոտնձգությունները համադրելու ունակություն:

Մինչդեռ քննական հայացք, գիտելիքներ, աշխարհի ընթացքի իմացություն մեր ժողովրդի մեկ տոկոսն էլ չունի, մարդկանց մեծ մասը իմացության պակասով խոցելի ու անպաշտպան է մարդկության դեմ կիրառվող զենքերից ամենաահավորի, ամենաանողոքի՝տեղեկատվական ներգործության հանդեպ, որը հատկապես կիրառում են մեզ վրա բոլորը՝ դրսինները, ներսինները, անհատներն ու խմբերը, բոլոր նրանք, որոնք փող ունեն տեղեկատվական իրենց հարկավոր զինատեսակը մեզ վրա կիրառելու: Այս բոլորը կատարվում է մի վտանգավոր ժամանակաշրջանում, երբ մեր հարեւաններից երկուսը չեն հրաժարվում իրենց ծավալապաշտական պլաններից՝փափուկ եւ կոշտ ուժերով կուլ տալու այլոց, այդ թվում մեզ, երբ աշխարհի մարդասիրական, բարեսիրական արգելակներն այս պահին չեն գործում, եւ միայն տնտեսական շահի գործոններն են շարժի գցված: Իսկ այդ գործոնները այսօր անդրադարձվում են նաեւ Հայաստանի քաղաքական ուժերում, պաշտոնեության մեջ, ընտրական ընթացքներում, այլուր:

Պահանջել հայ մարդուց՝ տարբերելու, տարբերակելու այդ շահերը, զատելու թշնամուն ու բարեկամին՝ մենք չենք կարող, այդպիսի հասարակություն չենք պատրաստել:

Մեր հասարակությունն առաջվա նման իր վերաբերմունքը քաղաքական խմբերի եւ անձերի հանդեպ պրիմիտիվ ազդակներով է ձեւավորում՝ առաջնորդվելով սիրո եւ ատելության կանխավարկածով, օրվա մի փոր հաց տվող անգրագետին գերադասելով գիտուններից եւ հասկացողներից: Նա կարող է չտեսնել իր գլխին կոտրվող քաղաքական թատրոնը, կոկորդիլոսի արցունքներն իրականի տեղ ընդունել, ենթարկվել կամերային ասուլիսներում քաղաքական կողմ ներկայացնող ֆենած մազերով լրագրողների՝ բնակարանի, մեքենայի, այլ նյութական արժեքների դիմաց որպես փոխհատուցում մանիպուլյացիաներին, դառնալ սարքովի տեղեկատվության զոհ ու ամեն անգամ ընտրություններին մի քայլով եւս կործանել Հայաստանը:

Մեր այս մտքերը հետեւել են ԱԺ-կառավարություն վերջին հարցուպատասխանում եւ իրավապահների հետ հանդիպմանը վարչապետ **Փաշինյանի** թարմ բարձրաձայնումներին, Հայաստանի երկրորդ նախագահ **Ռոբերտ Քոչարյանի** վերջին ասուլիսին՝ նորմալ մարդկանց համար ոչ մի պատրանք չթողնելով առ այն, որ Հայաստանում առկա կարծրացած, այսպես կոչված հեղափոխությամբ թյունինգ արված ֆինանսատնտեսական-քաղաքական համակարգը երբեւէ կարող է փոխվել, թույլ տալ արտահամակարգային զարգացումներ, թույլ տան մեր երկրին շնչելու՝ առանց արտաքին-ներքին միաձուլված կառավարման արհեստական-պարտադրված համակարգի, վերջապես մեր երկիրն ազատելով պարտադրանքներից, արտաքին աշխարհի տարբեր բեւեռներին ենթակա մոդելավորված գործընթացներից, այդ գործընթացները կառավարման համամասնակից եւ արդեն երեսուն տարի իշխող տնտեսաքաղաքական մաֆիայից, որոնք խժռել-իրենցով են արել եւ անում մեր երկրի բոլոր ոլորտները եւ անընդհատ իրար հավասարակշռելով, իրար լրացնելով, իրար քննադատելով, իրար փոխանցելով՝ պահպանում են իշխանությունը, տնտեսաֆինանսական լծակները, քաղաքական մենաշնորհները, մեջընդմեջ սպասարկելով արտաքին ուժերին նաեւ (տես՝ հզոր ուժերին պարտվելու մասին **Սերժ Սարգսյանի** խոսքը) եւ ողջ հայ ժողովրդին թողնելով ձեռնունայն:

Մենակ ինչ արժե գրեթե նույնական սխեման, երբ իշխող ուժն իրեն մրցակից է նշանակում Ռոբերտ Քոչարյանին եւ նրա շուրջ գծագրվող բեւեռը, Ռոբերտ Քոչարյանը՝ իշխող կուսակցությանն ու մի քիչ էլ փոխակերպված ՀՀԿ-ին՝ ի դեմս **Սամվել Կարապետյանի** եւ նրա շուրջ համախմբման (**Գագիկ Ծառուկյանն** էլ ձեզ նվեր): Կամ ցուլը խորհրդանիշ դարձրած նոր քաղաքական կառույց ստեղծող **Արման Թաթոյանն** է ի հայտ գալիս քաղաքական դաշտում: Ցուլն ինձ հիշեցրեց Հայտնության ցուլին, որի վրա գիտեք, թե ո՛վ էր նստած, ու այստեղ էլ, եթե հիշենք աշխարհի բոլոր այն հաջողակներին, ում կյանքում ցուլի խորհրդանիշն առաջնորդող է եղել, եւ հիշենք, թե ում շրջապատից են նրանք, ապա հասկանալի է դառնում, որ հայերս դույզն ինչ չենք դուրս եկել սկյուռիկի անիվից: Լավ, միթե այս փակ եւ արատավոր շրջանից մեր ժողովուրդը երբեք դուրս չի՞ գալու, մի՞թե չեն գտնվի մարդիկ, որոնք կկոտրեն արատավոր այս շրջանը՝ մեծ աշխարհին կուլ գնալուց հինգ րոպե առաջ կոտրելով Հայաստանի կառավարման հնացած համակարգը, որը հիմա էլ մարդկանց հիմարացնելու նոր աճպարարություններ է մոգոնում՝ երրորդ-չորրորդ հանրապետությունների խաղերով, քրեական պատմություններով, գերիներին Բաքվի բանտից չազատելով ու նման ուրիշ բազմաթիվ զգայացունց տեսարաններով ընդարմացնելով եւ քնեցնելով բոլորիս:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# «Մի կաթիլ մեղրի» նախընտրական տարբերա՞կ Գյումրու քաղաքապետի շուրջ

Ուշադիր հայացքը կարող է նկատել, որ այս օրերին լրատվական դաշտը «եռում է» Գյումրու քաղաքապետ **Վարդան Ղուկասյան**-վարչապետ **Նիկոլ Փաշինյան** խոսքային թեկուզ անուղղակի մի «փոխհրաձգության» եւ դրան հաջորդող զարգացումների մասին հրապարակումներով:

Արտաքուստ ամեն ինչ սկսվեց օրեր առաջ Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ վարչապետին Ղուկասյանի մասին Գյումրիից ՔՊ-ական պատգամավոր **Կարեն Սարուխանյանի** հարցից (գուցե հանձնարարված հարցից) եւ դրան Փաշինյանի տված պատասխանից: Հարցի սկիզբը հնչել էր այսպես. «Արդեն շուրջ 6 ամիս է, ինչ Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը կառավարում է մի կլան, որի ղեկավարը, կամ ինչպես շատերն են ճանաչում՝ Վարդանիկը... այս ընթացքում այնքան է իրեն արդեն թույլ տվել արտահայտություններ, որոնցից մեկով, ինչպես հանրությանն է տեղյակ, վերջերս հրապարակային ազգադավ (եթե այս բառը ճիշտ լսեցի - **Գ. Մ.**) հայտարարություններ անելով՝ կասկածի տակ դրեց Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը...»:

Վարչապետ Փաշինյանն էլ ի պատասխան, առանց անուն տալու, մասնավորապես ասել էր. «Նախ կարծում եմ՝ էդ հայտարարություններին առաջինը գյումրեցիները պետք ա գնահատական տան, որովհետեւ դա շատ կարեւոր է: Եվ երկրորդը, մյուսները նույնպես գնահատական պիտի տան... Ես կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության դեմ հայտարարություններ անողներին մենք պետք ա ուղղակի դուրս շպրտենք քաղաքական եւ հանրային դաշտից»: Ու թեպետ «ինչպեսի» առումով ավելացրել էր՝ «քաղաքական մեթոդներով եւ բոլոր էն մեթոդներով, որոնք կարելի է, կիրառելի է ժողովրդավարական երկրում», սա գոնե լրատվական դաշտում գնահատվեց որպես տվյալ անձի դեմ գործի անցնելու ուղղակի հրահանգ «մյուսներին», իմա՝ պետական տարբեր կառույցներին:



Իսկ ինչպե՞ս է, ըստ հարցը տվող պատգամավորի, Վարդան Ղուկասյանը «ազգադավ» հայտարարություն անելով կասկածի տակ դրել մեր պետության ինքնիշխանությունը: Կան տեսանյութեր, երբ իր նորից քաղաքապետ ընտրվելու օրը՝ այս տարվա ապրիլի 16-ին լրագրողների հարցերին պատասխանելիս նա, նկատի ունենալով մեզ շրջապատող երկու հայտնի հարեւանների հանգամանքը, ասել է, որ կողմ է Ռուսաստանի հետ միութենական պետության՝ Բելառուսի սկզբունքով: Ասել է՝ ես այդպես եմ գտնում (իր բառն է), ու խոսքի մեջ նաեւ ճշտել է՝ պահպանելով Հայաստանի անկախությունը, «սուվերենությունը»: Ընդունելի թե ոչ ընդունելի, բայց իր տեսակետն ու կարծիքն է արտահայտել: Սրանում կարելի՞ է տեսնել ազգադավություն, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը կասկածի ենթարկել... Ուրեմն հարցը տրվել էր հանուն հարցի ու հանուն նման պատասխան հնչեցնելո՞ւ:

Ասացինք, որ ամեն ինչ արտաքուստ էր սկսվել միայն: Իրականում պարզ չէ՞, որ ամեն ինչ սկսել էր խմորվել դեռ ամիսներ առաջվանից՝ Գյումրու համայնքային ընտրությունների արդյունքը հայտնի դառնալուց հետո: Հիշենք, նախ սրանից մոտ մեկ տարի առաջ եղավ Գյումրիում կառավարող ոչ-իշխանական «Բալասանյան դաշինքի» հրաժար(եց)ումը, երբ ավագանիում մեծամասնություն կազմող այս խմբակցության բոլոր 14 անդամները՝ համայնքի ղեկավարի գլխավորությամբ, վայր դրեցին մանդատները: Հետո քաղաքում կազմակերպվեց նորահնար «նախնական քվեարկություն», դրա արդյունքների հիման վրա համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակված Սարիկ Մինասյանն ընդգրկվեց ՔՊ-ական իշխանական թիմում, եւ նրա ու նույն ուժը ներկայացնող մարզպետի առկայությամբ ընթացավ այստեղ ՏԻՄ նոր ընտրությունների նախապատրաստությունը: Որի ընթացքում համարյա ամենօրյա ռեժիմով նաեւ հեռուստատեսային հակաքարոզչություն էր իրականացվում ընդդեմ Կոմունիստական կուսակցության կողմից քաղաքապետի թեկնածու առաջադրվող Վարդան Ղուկասյանի եւ որի դեմ կարծեմ դեռ 2019 թվականից սկսված դատական գործընթացների այս կամ այն կողմ հանգուցալուծման համար, ինչպես երեւում է, այս վեց տարին քիչ էր: Եվ չնայած մարտի 30-ին կայացած ընտրության արդյունքներով «Քաղաքացիական պայմանագիրը» ստացավ մասնակից քաղաքական ուժերից ամենաշատ՝ 14 մանդատ, ավագանի անցած երեք ընդդիմադիր քաղաքական ուժեր այնտեղ օրեր հետո կայացած քվեարկության ժամանակ իրենց ձայները որպես միասնական թեկնածուի տվեցին հենց Ղուկասյանին, եւ նա 18 քվեով հինգերորդ անգամ ընտրվեց Գյումրի համայնքի ղեկավար: Ու նաեւ եկող տարվա համապետական ընտրությունների համատեքստում հանրապետության երկրորդ մեծ քաղաքում իշխանությունը ձեռք գցելու փաշինյանական թիմի այդքան ջանքերն ապարդյուն անցան:

Այդտեղից էլ՝ երկրում կառավարող ուժի՝ այս հարցում որոշակի նյարդայնությունն ու ըստ ստեղծվող տպավորության՝ կարծես թե Վարդան Ղուկասյանի հարցով հիմնավոր «զբաղվելու» մտմտուքը: Մանավանդ որ վերջինս էլ «խելոք մնացողներից» չէ ու պարբերաբար խիստ քննադատում է իշխանությանն ու երբեմն անգամ սուր որակումներ տալիս: Իսկ հիմա երեւի կարելի է հասկանալ նրա անհանգստությունը եւ վերջին օրերի իր հաճախակի, ապա եւ իր պաշտպան կառույցների հայտնի հրապարակային հայտարարություններն այս կապակցությամբ, անգամ կոմկուսի խմբակցության՝ Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններին համատեղ ուղղված դիմումը եւ այլն:

Թվում է՝ եթե ԱԺ-ում հիշյալ հարցուպատասխանում հնչածն է Գյումրու ներկա քաղաքապետի դեմ պատրաստված մեկնարկային սցենարը, անհամոզիչ ու վատ սցենար է, ինչպես վերը նշված նախորդները: Ինչ վերաբերում է ամիսներ առաջ տվյալ անձի համայնքի ղեկավար ընտրվելուն, ինչին գուցե շատերը կարող են հավան լինել, շատերն էլ՝ ոչ (դա այլ հարց է), այդտեղ կարծես թե ամեն ինչ եղել է օրենքի սահմաններում, արդյունքներն էլ ժամանակին ընտրական հանձնաժողովում չեն վիճարկվել: Իսկ ինչ մնում է ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանի ասած եւ այս օրերին Գյումրու ավագանու ՔՊ խմբակցության հայտարարությունում կրկնված այն պնդմանը, թե կաշառք է բաժանված եղել, այդ արդեն պետք է պարզվի համապատասխան կառույցի կողմից: Բոլոր դեպքերում կարծում ենք, եթե Վարդան Ղուկասյանը կամ որեւէ այլ անձ ինչ-ինչ հիմնավոր իրավական, բարոյական կամ այլ պատճառներով իրավունք չուներ ընտրվելու այդ պաշտոնում, ապա գուցե նրա նախ հենց թեկնածության առաջադրումը պետք է մերժվեր: Իսկ ընտրվելուց ու կես տարի աշխատելուց հետո նրա դեմ նոր պատճառներ գտնելը, անկեղծ ասած, արդեն ուրիշ տպավորություն է թողնում:

# Ջոն Այբներ. «Չկա արդարություն, չկա խաղաղություն»

⇨1 «Խաղաղությունը հակամարտության վերացական բացակայություն չէ, գործողության մեջ արդարություն պիտի լինի», շեշտել է Ֆուքսն՝ ընդգծելով, որ բոլոր արդար գործողությունների հիմքը մարդկային արժանապատվությունն է: Ֆուքսը Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնությունը ներկայացրել է՝ որպես բարոյական հրամայական, ձեւակերպելով՝ «իրական խաղաղությունը պահանջում է արդարություն»:

Գերմանիայի հանձնառության մասին է խոսել ԳԿԽ նախագահ Յոնաթան Շտանգենբերգը՝ ներկաներին հիշեցնելով ԳԴՀ ԱԳ նախարար Աննալենա Բերբոքի՝ 2023 -ի սեպտեմբերի 23-ի ՄԱԿ-ի ԱԽ-ում ունեցած ելույթը, որում Ադրբեջանի՝ ռազմական ուժի միջոցով փաստեր ստեղծելու, էթնիկ հայերի վտարումը որակում էր «անընդունելի»: ԳԿԽ նախագահը հիշեցրել է նաեւ ՄԱԿ-ի հատուկ խորհրդական **Խուան Մենդեսի** դասակարգումը՝ ըստ որի բռնի տեղահանությունը Ցեղասպանության կոնվենցիայի 2(բ) հոդվածին է համապատասխանում: Գրեթե 2 տարի անց ոչ ոք չի վերադարձել, չնայած Միջազգային դատարանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի Ադրբեջանին պարտավորեցնող որոշման: Արցախի մարդու իրավունքների նախկին պաշտպան, Արցախի համայնքի ներկայացուցիչ Արտակ Բեգլարյանը Բեռլինի լսարանին փոխանցել է, թե «արցախցիներին հուզող առաջին հարցը վերադարձին է վերաբերում: Վերջերս անցկացված հարցմամբ՝ 87 տոկոսը ցանկանում է վերադառնալ տուն: Սակայն Ադրբեջանը մերժել է մուտքի բոլոր հարցումները, նույնիսկ գերեզմանատներ եւ եկեղեցիներ կարճատեւ այցելությունները եւ համակարգված ոչնչացնում է հայկական մշակութային ժառանգությունը, ապօրինի բնակեցնում հայկական տները»:




*Ձախից աջ՝ Յոնաթան Շտանգերնբերգ, Էրիհ Ֆոնթոբել, Ջոն Այբներ, Փեթեր Ֆուքս*

ՄՔԴ-ի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն շեշտել է, որ «ԼՂ-ից բռնի տեղահանված ժողովուրդը ներկայացուցչության կարիք ունի»: «Ադրբեջանը վերահսկում է տարածքը, ունի էթնիկ հայ համայնքը վերացնելու քաղաքականություն, որը ցեղասպանության ռիսկ է»: «ՀՀ-ն հստակորեն չի կարող բանակցել ԼՂ վերաբերյալ, նշել է Օկամպոն, հետեւաբար, ԼՂ-ի ժողովուրդը ներկայացուցչության կարիք ունի»: Օկամպոն շեշտել է Շվեյցարական նախաձեռնության, դրան միջազգային լայն սատարման կարեւորությունը:

«Չկա արդարություն, չկա խաղաղություն» եզրափակիչ ելույթում ընդգծել է Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության նախագահ դոկտոր Ջոն Այբները: «Խաղաղության գործընթացը, որը չի վերացնում արտաքսման անարդարությունը, թերի է եւ «նվազ արդարություն» է պարունակում: Քանի դեռ արդարության այս տարրը բացակայում է, «այն կհետապնդի Հայաստանին, տարածաշրջանին եւ մեծ տերություններին»: Այբները շեշտել է, որ սա « պայքար է քաղաքակրթության համար»՝ հայկական ճգնաժամը ներկայացրել իսլամական աշխարհից քրիստոնեական համայնքների տեղահանման ավելի լայն համատեքստում՝ նկատի ունենալով Սիրիան եւ Իրաքը:

Շվեյցարական նախաձեռնությունն առաջիկայում հանդիպումներ կունենա Լոնդոնում:

# Մարդը Արարատից



Շատ է գրվել Կոստան Զարյան մարդու եւ իր գրականության մասին: Եղել են գրականագետներ, որոնք տարիների նվիրյալ ուսումնասիրություններից հետո ըմբռնել են հեղինակի խորունկ համամարդկային իմացականությունը՝ նրա գրականության եզակի արժեքը: Եղել են եւ կան նաեւ մտավորական տարբեր *հայացքներով* բանիմացներ, որոնք հետամուտ են միայն քանդելու այն, ինչ որ անվանում են «Զարյանական ամեհի բերդը»:

Այսօր անկախ Հայաստանում կան անձեր, հատկապես երեց սերունդից, որոնց կարծիքով՝ «Կոստան Զարյանը չմերվեց խորհրդային գրականության եւ խորհրդային գրողների գավառացի միջավայրում»: Այսպես էր մտածում գրող Պերճ Զեյթունցյանը Կոստան Զարյանի մասին: Հարկ եմ համարում պատասխանել հորս՝ **Արմեն Զարյանի** խոսքերով, մեջբերում անելով իր օրագրից. «Վաթսունական թվականներին (ճիշտ տարին չեմ հիշում) տեղի ունեցավ Հայաստանի Գրողների համագումար: Գրողները եւ մտավորականությունը հավաքված են Սպենդարյանի անվան թատրոնում, դահլիճը լի է բազմությամբ, բեմի վրա տեղ են գրավել գրողներ, բարձր պաշտոնյաներ, նախագահում է ընկ. Թոփչյանը՝ Գրողների Միության նախագահը: Հայրս, ես էլ կողքին նստած ենք դահլիճի 8-9-րդ շարքում, ավելի առաջ՝ քանդակագործ Քոչարը:

Ելույթներ, ելույթներ, վերջանում է նիստի առաջին հանդիսավոր մասը: Հայրս ոտքի է ելնում քիչ ես գնում ճեմելու: Իրեն են մոտենում մի քանի երիտասարդ գրողներ եւ՝ «ընկ. Կոստան Զարյան, ինչո՞ւ ձեզ չեն հրավիրել բեմ ղեկավարության կազմի եւ մյուս գրողների հետ միասին նստելու», Կ. Զարյանը պատասխանում է. «Կարեւորը մենք չենք, այլ՝ ժողովուրդը, որին բոլորս էլ ծառայում ենք»: Քաղաքակիրթ բոլոր հասարակությունները արհեստագետների կողքին ունեն գրաքննադատներ, որոնք իրենց վերլուծումներով նպաստում են տվյալ հասարակության մշակույթի ընկալմանը, մտահորիզոնին, ճաշակին, մակարդակին: Ուստի այսօր, XXI դարում «Նավը լեռան վրա»-ի առաջին հրատարակությունից 74 տարի հետո, 10 անգամ վերահրատարակված ու իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, էստոներեն թարգմանվելուց հետո դեմ ենք գտնվում Պ. Զեյթունցյանի հետեւյալ կարծիքին, թե՝ «Նավը լեռան վրա»-ն աբսուրդ վեպ է իր մտահղացմամբ կամ «Նավը ի՞նչ գործ ունի լեռան վրա, արդեն աբսուրդ է, ի՞նչ իմաստ ուներ»: Ակամա գտնվում ենք «աբսուրդ» մի հայտարարության առջեւ, որ վկայում է, որ հարգելի գրագետը չի կարդացել վեպը եւ եթե նույնիսկ կարդացել է, անկարող է, ամուլ է թափանցելու ա՛յս նշանակալից վեպի խորիմաստ խորհուրդը: «Նավը լեռան վրա» վեպը, գրում է եզակի գրագետ **Ալբերտ Կոստանյանը**, արձակ գրականության ողջ տարերքի մի ընդարձակ մասն է միայն ու որպես այդպիսին նա անանջատելի շարունակությունը՝ թե՛ իր նյութով, թե՛ ոճով ու գրելակերպով: Բացառապես վիպականը, որ, այնուամենայնիվ, զգալի է, մի խումբ խորհրդանշանների բազմիմաստությունն է, որ ներկայացվում է շատ որոշակի կառույցի սահմաններում:

Վերնագիրը հուշում է՝ նավի ու լեռան սիմվոլիկան մարդկության չափ հին է եւ հատկապես մեր աշխարհի հետ է առնչվում եւ ուղեկցել է մարդկային ստեղծագործ երեւակայությունը դարաշրջանից դարաշրջան»:

Հռոմում, քառասունական թվականներին, Վիա Սիստինա-ում գրում է Արմեն Զարյանը. «Հայրս խոսում էր Իբսենի «Peer Gynt»-ի մասին եւ ակնարկելով նոր լույս տեսած «Նավը լեռան վրա» (1943) վեպին, ասաց. «Ես սկսեցի այն տեղից, որտեղ Իբսենը վերջակետ դրեց»: Մասն առաջին, ... հեռավոր ճամբորդությունների նավապետ Արա Հէրեանը...»: Գրականագետ **Երվանդ Տեր-Խաչատրյանը** նշում է այս դրվագը եւ շարունակում է. «Արա Հերյանը վեպում իր կյանքը սկսում է ծովերն ու հեռավոր ճամփորդությունները թողնելուց հետո: «Լեռների ազատ եւ խենթ ոգի» Պեր Գյունտը ապրել է իր ամբողջ կյանքը եւ հիմա, արդեն ծերունի դարձած, վերադարձել է Նորվեգիա, բայց այդպես էլ չի գտել իր կյանքի իմաստը, ժամանակին չի կարողացել հասկանալ եւ գնահատել Սոլվայգի սերը, իր հետագա կյանքը չի ունեցել ներքին նպատակ ու բովանդակություն: Երիտասարդ Արա Հերյանը, կռահել է,- ներքնատեսորե՞ն, թե՞ տրամաբանորեն,- թե ինչի է կոչված ինքը, ինչը պետք է կազմի իր կյանքի հիմնական իմաստն ու բովանդակությունը: Նա կոչված է իրագործելու անկարելին՝ նավը բարձրացնելու լեռը:

Կոստան Զարյանն իր գրականության հիմնական հերոսին՝ նույն Անցորդին եւ նույն Վահան Իբերյանին, երրորդ անգամ բերում է Հայաստան: Արա Հերյանը, ի վերջո, այդ հերոսին նոր կերպափոխությունն է»:

Կոստան Զարյանին հարցնում են՝ «Ինչո՞ւ չեք գրում ձեր կյանքի հիշողությունները», նա պատասխանում է. «Իմ կենսագրությունը իմ գործերում է», եւ ավելացնում. «Բանաստեղծի կյանքից արժանի է, որ պահպանվեն այն ամենը, ինչ դառնում է բանաստեղծություն», եւ հիշեց «Հոմերոսին»:

«Նավ»-ը իր ոդիսականը սկսեց Բոստոնից 1943-ին շնորհանդեսի իր ճամբորդությունը կատարելով դեպի Իտալիա: Այստեղ էր իրեն սպասում ազնվական ու նվիրյալ **Թագուհի Շահնազարը**՝ հեղինակի առաջին կինը, որն իր ամբողջ կյանքի ընթացքում մնաց իր խորհրդատուն եւ ոգեշնչողը: Արմեն Զարյանը նշում է՝ «Այս վեպը մայրս թարգմանել է իտալերեն, թարգմանությունը խմբագրել է իտալացի գրող, իսկ հայրս եւ ես, Գիրենցեյում, դեմ դիմաց նստած, վերանայել ենք իտալերեն թարգմանութունը»: Ասեմ նաեւ՝ թարգմանությանը օգնել է Թագուհու քրոջ աղջիկը՝ **Կլարա Քարլինի**, լեզվաբան եւ իտալերենով գրած տպավորիչ պատմվածքների գրքի հեղինակ: 1963-ին Խորհրդային Հայաստանում գաղափարական ահաբեկչության շրջանում «Նավը լեռան վրա» վեպը ենթարկվում է ահավոր այլակերպման: «Ես,- ասում է հայրս,- իմ գրիչը չեմ տրամադրի ոչ մի պետության եւ ոչ մի կուսակցության: Ահա չորս տարի է, որ դիմում եմ տվել Հայաստանի Գրողների միության անդամ դառնալու նպատակով, բայց դեռ սպասում եմ, որ ինձ ընդունեն: Այո՛, պայմաններից մեկը այն է, որ լույս տեսնի «նոր խմբագրությամբ» «Նավը լեռան վրա» երեւանյան հրատարակությունը: Դա պայման էր, որպեսզի ընդունվի Գրողների միություն, որպեսզի կարողանա մնալ Հայաստանում ստանալով 130 ռուբլի ամսավճար՝ թոշակի ձեւով: Հիշում եմ նաեւ, որ հորս մոտ էին եկել մի քանի գրող, ուզում էին համոզել, որ «վերանայի» իր «Անցորդը» եւ «Ճամբան», հայրս զայրացած՝ «Դուք ստալինիստներ եք» ասելով նրանց դուրս հանեց տնից: «Արմեն, ուզում եմ թողնել այս երկիրը, գնալ արտասահման եւ «Անցորդի» ոգով գրել մի ուրիշ գիրք»:

«Կ. Զարյանը մահացել էր: Մի օր փողոցում, Կոնսերվատորիայի առաջ հանդիպեցի «Նավը լեռան վրա» երեւանյան հրատարակչության գլխավոր խմբագիր **Հր. Գրիգորյանին**, նա կանգ առավ, սեղմեց ձեռքս եւ ասաց՝ «Ես սխալվեցի ձեր հոր վրա ճնշում բանեցնելով, որպեսզի նա վերանայե, ամբողջացնե իր վեպը, սխալվեցի. խնդրում եմ հավատաք»: Լռեց, լուրջ նայեց դեմքիս եւ «... բժիշկը ասաց, որ ես դեռ վեց ամիս կյանք ունեմ, արյունա....»: Մտահոգ նայեց ինձ, բարեւեց ու հեռացավ: Սերեբրյակովն ասել էր. «Ձեր հայրը միամիտ մարդ էր», նա որոշ իմաստով ճշմարտացի էր:

«Նավը լեռան վրա» վեպի երեւանյան փոփոխված հրատարակությունը ունեցավ իր մարդկային զոհերը, առաջինը եղավ հեղինակը, նրան թունավորեցին, իսկ երկրորդը՝ խմբագիրը՝ Հր. Գրիգորյանը, լեուցեմիան սպանեց նրան: Մյուսը, որ խմբագրել էր «Նավ»ի հայերենը՝ **Թոփուզյանը**, Վեհափառի մոտ աշխատող, պարում է հանգիստ ու պարտականությունը կատարած մարդու նման անկարեկից է»:

1969-ին նույն կուսակցական վերադաս մարմինը, որը ղեկավարում էր «Հայաստան» հրատարակչությունը, առանձին պետություն կազմած լիակատար վստահությամբ այս անգամ հանձին նախագահ Խ. Բարսեղյանի՝ դատաքննության է ենթարկում Պ. Սեւակի «Եղիցի լույս»-ը: Հայ ժողովրդին ուղղված ազատության ու իր ազգային ճակատագրին տեր կանգնելու Պ. Սեւակի այս կոչը (մեջբերում՝ **Վ. Մկրտչյանի**. Ո՞վ «կանգնեցրեց» «Եղիցի լույսը», «Հայաստանի Հանրապետություն», 21.09.93 հոդվածից), «Խ. Բարսեղյանը ինքնավստահ ցինիկությամբ խոստովանում է, թե շուրջ երկու տարվա ընթացքում ինչպես է բզկտվել «Եղիցի լույս»ը, ինչ ավերածություններ են կատարվել գրքում իբրեւ այն «անխոցելի» դարձնելու բարի ցանկությամբ: «Հանվել են առանձին բանաստեղծություններ,- գրում է Խ. Բարսեղյանը,- կրճատվել են շատ տողեր, կատարվել օգտակար շտկումներ»...:

Նույն թվականին, Կ. Զարյանի թաղումից երկու օր առաջ, Ա. Զարյանը գնում է Գրողների միություն ու նախագահի սենյակը մտնելով՝ «Թոփչյանը ոտքի կանգնեց, ցավակցության խոսք ասեց, նստեց եւ շտապեց ասելու, որ Կոստան Զարյանի ստեղծագործությունների հինգ հատորանին չի հրատարակվելու, որովհետեւ հանվել է ցուցակից: Թղթի պակաս կա,- ասաց նախագահը,- պետք է խնայել, այդ պատճառով հարկ եղավ հրատարակվելիք գրքերի ցուցակը կրճատել, հանվեցին նաեւ ձեր հոր գործերի՝ հինգ հատորները»: 1970-ին, այս անգամ Պետհրատի շենքում, այս անգամ Ստեփան Ալաջաջյանի մոտ նա տալիս է հետեւյալ խորհուրդը Արմեն Զարյանին՝ «Արմեն, գոնե առայժմ ձեր հոր գործերը չեն հրատարակվելու, ուղարկեցեք արտասահման, այնտեղ կտպեն»: Հետո դարակից հանեց երկու մեքենագիր հատոր, դանդաղ թերթեց «Սպանիան», էջեր, էջեր՝ վրան գրված՝ հանել, ապա ուրբագրություններ, ջնջված պարբերություններ: Նայեց ինձ, այո՝ պատասխանեցի, չեմ թողնի, որ այս գրքերը ունենան «Նավը լեռան վրա» վեպի ճակատագիրը»:

Անցնում է տասնհինգ տարի, 1985-ին, այս անգամ «Սովետական Արվեստի» գլխավոր խմբագիրը՝ **Ս. Բայանդուրը**, ցանկություն է հայտնում հրատարակել Կ. Զարյանի անտիպ էջերից: Արմեն Զարյանը նրան հանձնում է Արվեստի պատմությունից «Գոթական Արվեստը» եւ «Ջիոտտո» գլուխները: Մեջբերեմ խմբագրի պատասխանը հորս. «Խմբագիրը այսօր ինձ կանչեց, հետ տվեց մեքենագիր էջերը, ասելով՝ «եթե տպեինք, պետք է շատ խմբագրեինք, իսկ դուք, ես գիտեմ, որ դեմ եք, որ ձեր հոր գործերը խմբագրվեն», եւ ավելացրեց՝ «Քաշած նեղության համար՝ եկեք ամսվա վերջը եւ կստանաք մի փոքր հոնորար»:

«Ընդհանրապես մեր ժողովրդի ժամանակակից ողբերգություններից ամենամեծն այն է,- գրում է **Վարուժան Վարդանյանը** իր «Մինասի վերադարձը» գրքում,- որ գրեթե ոչ մի մտավորական չի կարողացել խուսափել՝ անկաշկանդ եւ հանգիստ դրսեւորելու իր կարողությունները: Թերեւս այդ պատճառով էլ մտածողությունը չի կարողանում շարունակաբար զարգանալ, այսինքն՝ չկա սերունդների բնական եւ կատարյալ շարունակություն»: Այս ճշմարտությունը ընդունելով հանդերձ, **Լեւոն Անանյանը**, որ 25 տարի եղավ «Գարուն» ամսագրի խմբագիր եւ հետագայում Հայաստանի Գրողների միության նախագահ, Արմեն Զարյանին հետեւյալ առաջարկն է անում՝ հոդված գրել հետեւյալ նյութի շուրջ՝ «Կոստան Զարյանը իր հայրենիքում տեղ չունի»: Վերնագիրը ճիշտ է,- ասում է Արմեն Զարյանը,- բայց նա որպես որդի մերժում է՝ ասպարեզը թողնելով գրողներին, ընթերցողներին: Ուստի տեղին է նաեւ այս մեջբերումը Արմեն Զարյանի օրագրից:

«Սովետական կոչված Հայաստանը մի երկիր է, ուր սպանել են բանաստեղծներին՝ Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ, գրողներին՝ Բակունց, Թոթովենց, նկարիչ Մինաս Ավետիսյանին, 1969 թ. նույնմբերին՝ Կոստան Զարյանին: Ո՞վ է գրելու սպանված բանաստեղծի ողբերգությունը, ո՞վ պիտի շարունակի Պոլ Վերլենի «Անիծյալ բանաստեղծներ» (1884) պոեմը, որոնց շարքում են Ռեմբո, Մալարմե, Կորբիեր, Վիլիե դը-Լիլ-Ադամ. նույն ինքն՝ Վերլենը, եւ ամբողջացնել շարքը՝ ավելացնելով հայ բանաստեղծների, արձակագիրների եւ նկարիչների անունները: Տիեզերական ընդարձակությամբ մտահղացված ողբերգական պոեմ. ասելու համար ցավը այն մարդկանց, որոնց ստեղծած երգը, ֆրանսերեն եւ հայերեն, կազմում է այդ երկրների մարդկանց ոգեկան գոյացության ներէությունը, քանի դեռ միտքը, երգը լինելիություն է նախեւառաջ: Երգը հավերժության լուսավոր ճանապարհ է»:

Դեկտեմբեր 11, 1969 թ.: «Տանում են հորս դագաղը, մենք ընտանիքով հետեւից ենք գալիս, քիչ հեռու **Էմինը**, դագաղը տանում են երիտասարդները, նրանց գլխավորում է **Լեւոն Ներսեսյանը:** Դագաղը պահում են բարձր՝ ձեռքերի վրա: Էմին՝ «հերիք է ձեռքերի վրա պահեք, կհոգնեք, նորմալ պահեցեք», Լեւոնը՝ «եթե այսպես մարդուն մեր ձեռքերի վրա բարձր չպահենք, էլ ո՞ւմ պահենք», սա եղավ ազնիվ մարդու՝ Լեւոնի պատասխանը, եւ երիտասարդները այդպես ձեռքերի վրա բարձր պահած՝ տարան դագաղը մինչեւ գերեզման: Մի օր Կ. Զարյանի գերեզմանաքարը մաքրած ժամանակ Արմեն Զարյանին մոտեցավ նկարիչ **Մինասը**՝ «ինչ լավ է,- ասաց,- որ հորդ գերեզմանաքարի վրա քանդակել ես տվել խաչը»:

Ուզում եմ վերջացնել **Լեւոն Հախվերդյանի** հետեւյալ մտքով. «Որքան էլ ազգակից՝ իմաստով շատ են տարբեր երկյուղածություն ու երկյուղ բառերը: Երբ զրույցի ես նստում Կոստան Զարյանի հետ՝ դրանք իմաստով էլ մոտենում են, գրեթե նույնանում, որովհետեւ եթե արտիստական այդ շքեղ կերպարանքը, այդ վեհատեսիլ ծերունազարդ մարդն իր ամբարած իմացությամբ ու մտքի անկախ թռիչքով հարուցում է պատկառանք ու երկյուղածություն, ապա մեզ համար սրբություն ու հեռավոր առասպել դարձած մեծերի հետ ունեցած շփումների անճիգ մտաբերումներն այնքան շատ են ու ազդու, որ հարուցում են մի զգացում, որ հեռու չէ երկյուղից»:

**ՍԻՐՎԱՐԴ ԶԱՐՅԱՆ**

**1.05.17 թ.**

# Ինչ համերգ՝ Վահագն Ստամբոլցյանի անվ. երգեհոնային երաժշտության III միջազգային փառատոնին

Սեպտեմբերի 24-ին Երեւանում մեկնարկեց Վահագն Ստամբոլցյանի անվ. երգեհոնային երաժշտության III միջազգային փառատոնը: Փառատոնի բացման համերգը, որ կայացավ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը, ամբողջապես նվիրված էր Կոմիտասին: Առաջիկա երեք ամիսների ընթացքում փառատոնի շրջանակներում կանցկացվեն եւս ութը համերգներ Երեւանում, Կապանում, Չարենցավանում:

Ամեն երկիր չէ, որ իրեն կարող է թույլ տալ երգեհոնային արվեստի փառատոներ պարբերաբար անցկացնելու «ճոխությունը»: Դա մեզանում հնարավոր է դարձել երգեհոնային կայացած դպրոց ունենալու, փառատոնի գաղափարը հղացողների եւ նախաձեռնողների խանդավառության ու հետեւողականության, ինչպես նաեւ հայ հանդիսականի նվիրվածության շնորհիվ: Երգեհոնայի երաժշտության համերգները մեզանում անցնում են լեցուն դահլիճներում, եւ հանդիսականները տարբեր տարիքի մարդիկ են: Իսկ փառատոնի նախաձեռնողը Կամերային երաժշտության ազգային կենտրոնն է (ԿԵԱԿ), հիմնադիրը եւ գեղարվեստական ղեկավարը՝ ԿԵԱԿ փոխտնօրեն **Արմեն Սուքիասյանը**: Հենց նա էր, որ բացման համառոտ խոսքով հայտարարեց փառատոնային առաջին օրվա համերգի սկիզբը: Ա. Սուքիասյանը շնորհակալությամբ հիշատակեց նրանց, որոնք օգնել են փառատոնը կայացնելու հարցում. դրանց թվում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, որը ողջունել է փառատոնն անցկացնելու գաղափարը եւ աջակցել այդ գաղափարն իրականացնելուն, միջազգային մի շարք կառույցներ, որոնք օգնել են կազմակերպիչներին տարբեր երկրներից հրավիրված երգեհոնահարների հետ բանակցելու եւ նրանց հավանությունն առնելու գործում: Եվ, իհարկե, Ա. Սուքիասյանը երախտագիտությամբ դիմեց դահլիճում ներկա հանդիսականներին, որոնց ջերմությունն ու խրախուսանքն էր, որ ոգեշնչել էր իրենց՝ շարունակական դարձնելու փառատոնը՝ ամեն անգամ ավելի ընդգրկուն դարձնելով հերթական փառատոնի ներկայացվող ծրագրերը, նաեւ ընդլայնելով համերգներն անցկացնելու վայրերի ցանկն ու ապահովելով արտերկրից հրավիրյալ հանրահայտ երգեհոնահարների մասնակցությունը:



Նկատեց, որ առաջին փառատոնից հետո զգալի առաջընթաց ենք ունեցել երգեհոնային արվեստում, հայաստանյան դպրոցներում սկսել են երգեհոնայի երաշտության դասեր անցկացնել, շատ մասնավոր դպրոցներ երգեհոններ են գնել, ունենք կայուն եւ նվիրված հանդիսատես, որի շարքերում շատ են երիտասարդ սերնդի ներկայացուցիչները: Անգամ նախորդիվ արտերկրից ժամանած երգեհոնահարները զարմանքով են նկատել մեզանում երիտասարդների հետաքրքրվածությունը երգեհոնային երաժշտությամբ, քանի որ իրենց երկրներում սովոր են դահլիճներում տեսնելու միջինից բարձր տարիքի ունկնդիրների:

Կարելի է ընդգրկուն խոսք ասել **Վահագն Ստամբոլցյանի** մասին, որը խոշոր դերակատարություն է ունեցել երգեհոնային արվեստը մեզանում արմատավորելու եւ տարածելու, հայ հոգեւոր երաժշտությունը բեմ բերելու, Հայաստանի տարբեր քաղաքներում երգեհոններ տեղադրելու, ընդհանրապես՝ հայկական երգեհոնային դպրոցը հիմնադրելու եւ երգեհոնահարների ներկա սերունդն ունենալու գործում: Բանախոսն առիթը գործածեց՝ տալու հայ երգեհոնահարների ավագ սերնդի մի քանի կարկառուն ներկայացուցիչների անունները հնչեցնելու համար՝ **Արթուր Ադամյան**, **Լեւոն Աբրահամյան**, **Դավիթ Դիլանյան**, **Աշոտ Աֆրիկյան, Գարեգին Գրիգորյան, ամերիկահայ երգեհոնահար Պերճ Ժամկոչյան, Կարինե Աղաբեկյան:**

Բանախոսը հույս հայտնեց, որ այսուհետ երգեհոնայի երաժշտության այս փառատոնը կլինի շարունակական, ուստի եւ՝ ավանդական: Նա ավարտեց իր խոսքը՝ դիմելով ժամանակակից հայ կոմպոզիտորներին՝ ասելով, որ մեր երգեհոնահարները սպասում են նոր ստեղծագործությունների:

Կազմակերպիչների եւ հովանավորների համոզմամբ, երգեհոնային փառատոնը մի քանի կարեւոր առաջընթացներ է արձանագրում. նպաստում է հայ երգեհոնային դպրոցն ընդլայնելուն, կատարելագործելուն եւ հանրահռչակելուն: Արտերկրից հրավիրյալ երգեհոնահարների ներկայությամբ եւ կատարումներով բարձրանում է փառատոնի միջազգային հեղինակությունը, մեծանում է ճանաչելիությունը, նաեւ հնարավոր է դառնում երաժիշտների միջեւ կենդանի շփումների միջոցով կատարողական արվեստի առումով փորձի փոխանակումը: Նաեւ երգեհոնային արվեստը մայրաքաղաքային բեմերից տեղափոխվում է մեր մյուս քաղաքներ, մասնավորապես Կապան, Չարենցավան. հող է ստեղծվում հետագայում այլ մարզերի համար եւս երգեհոններ ձեռք բերելու, տեղադրելու եւ երգեհոնային կենդանի կատարումները լայն ազգաբնակչությանը հասանելի դարձնելու համար:

Իսկ այս համերգին հանդես եկան երգեհոնահարներ **Թերեզա Ոսկանյանը**, **Արմեն Աղաջանյանը, Արփինե Հարությունանը, Հարություն Թագվորյանը եւ Լուսինե Հարությունյանը**: Ծրագիրը կազմված էր հիմնականում կոմիտասյան ստեղծագործությունների կամ մշակումների հիման վրա, նաեւ հնչեցին հայ հեղինակների՝ կոմիտասյան շնչին համահունչ գործեր:

⇨8

# Ռաֆ Բարաթյանի սրտի տրոփն ու երակի զարկը՝ «Ինձ նկարել եմ ներկայիս վրա» նոր գրքում

Լույս է տեսել **Ռաֆ Բարաթյանի** բանաստեղծությունների 11-րդ ժողովածուն՝ խորագրով,բանաստեղծ **Ավիկ Դերենցի** առաջաբանով:

Ռաֆ Բարաթյանին «**Ազգ**»-ով ներկայացնելու առիթներ եղել են՝ նա խորը, մինչեւ վերջ ապրված զգացումների բանաստեղծ է, նրա ամեն բառը, նրա պատկերավորումները, նրա զուգահեռումները ընթերցողին ստիպում են նրա տողերում թաքնված ափսոսանքը, կարոտը, թանձրացումները վերապրել ամեն պատկերի հետ, նրա ամեն բառում զգալ բանաստեղծի սրտի տրոփն ու երակի զարկը:

Գրքի առաջաբանի՝ բանաստեղծ Ավիկ Դերենցի ստորեւ մեջբերված հատվածը պատկերացում է տալիս Ռաֆ Բարաթյանի պոեզիայի մասին.

«Պոեզիայի ավանդական թեմաները՝ մայր, հայրենիք, սեր, բնություն, շատ ինքնատիպ և յուրօրինակ բառաձևումներով են արտահայտված:

«Մայրս աշխարհն է շալակած տանում» խորագրով է մեր առաջ իր տրոփող սիրտը բացում բանաստեղծը: Ընթերցեցի ու տեսա ամռան տաք գույներով արարված մի կտավ, որի շերտերում և՛ արևի փարում կա, և՛ մոտալուտ աշնան տամուկ թախծություն.

*...Օգոստոսներին ես քեզ պահ կտամ,*
*Գգվում եմ նրանց ես ոտաբոբիկ,*
*Նրանք հոգին են ու մարմինն այն տան,*
*Որում չեմ խաչվում ես ինձ հետ, մայրի՛կ:*

Իրականությունից մի պահ վերանալու տենչ, միաժամանակ ներկայում լինելու, պահի սրտխփոցը՝ գրչի նուրբ հպումով հանդարտեցնելու անեզր ցանկություն.






*...Գնում է՝ ծոցին անտարիք հասակ*
*Ու սերմ, ու բողբոջ, ու երկիր հասուն,*
*Մի մայր ճչում է. «Ի՛նձ էլ հետդ տար,*
*Մի մայր ճչում է. «Ե՛ս էլ եմ աշուն...»:*

Ցավում է երկրի ցավն իր բանաստեղծ զավակի հոգում. հողը կորցնելու տագնապ, իղձերի թխպոտ երկնքում մոլորված երազ և հավաս՝ հայրենիքի վերադարձի.

*...Աստղեր, դուք էլ վերեւ*
*Դարձեք ճամփով պարզկա,*
*Չե՞ք զգում, որ ձեր մեջ*
*Հայրենիքս չկա:*

*Ես էլ իջնեմ երկիր՝*
*Փնջած կարոտն անհագ,*
*Մինչ հոգիս ինձ գրկի,*
*Հայրենիքս կգա...*

Երբ մի պահ վհատության լացն է ցողվում երազող հոգու թերթերին, լուսնի ու աստղերի աչքից անտես՝ աշնանահար հոգուն այցելում է Սերը՝ Գարունը կանաչազգեստ:

Ու թեև անպատասխան են մնում սիրո հասցեով ուղարկված նամակները, բայց չի խռովում սիրամեծար հոգին. ընդունում է իր անճարությունը.

*...Է՛հ, ճարս ի՞նչ, դեռ քեզ նամակ եմ գրում*
*Իմ աչքերը կաթիլներով խաչակիր՝*
*Աստվածներից և՛ քեզ, և՛ ինձ անդադրում*
*Առնելու՝ հանց հարությունը առաջին...*

Ներկայի վրա նկարված հոգու ցուրտը մեղմողը անդավ բառի ջերմությունն է, հույզերի անսպառ թանաքը, որում թաթախվում է աշխարհի բեռը շալակած գոյը խաչակիր.

*Ո՞վ դու բանաստեղծ,*
*Շալակի՛ր բառդ*
*Ու հոսի՛ր անեղծ*
*Դեպի վտառդ:*

*Հագինդ ծով է,*
*Ծոցվորդ՝ ջուրը,*
*Շալակի՛ր ծովե*
*Քո կյանքի հուրը:*

Իմ լա՛վ ընկեր ու բարեկամ Ռաֆ Բարաթյան, ողջունում եմ նոր՝ «Ինձ նկարել եմ ներկայիս վրա» գրքիդ լույսընծայումը: Սիրով լեցուն լինի սրտիդ գավը, բառիդ անապակ գինով լի հոգեթասդ խինդով խփես քո՝ այնքա՜ն սիրած երկրի թասին»:

**Պատրաստեց՝ Մ.Խ.**

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Զմյուռնիայի հրդեհի մասին՝ անգլերենով

«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ վերջերս հրատարակվել է **Հայարփի (Ալիս) Տորյանի «Մանկություն առանց գարունի: Զմյուռնիայի մեծ հրդեհի ականատեսի վկայությունները»** հուշագրության անգլերեն թարգմանությունը: Ալիս Տորյանը այն գրել է 1970-ական թվականների կեսերին, երբ ԱՄՆ է տեղափոխվել: Այժմ, մոտ 50 տարի անց, նրա թոռը՝ **Փիթըր** նախաձեռնել է գրքի առաջին անգլերեն թարգմանությունը, որը նա ձոնել է իր մեծ մորը: Ալիսը Թուրքիայում է ծնվել 1900-ականների սկզբներին, դուստրն է Տ. Հովհաննե քահանա Նազարյանի, որը նաեւ երկար տարիներ ճանաչված մանկավարժ-դաստիարակ է եղել: Ալիսը ականատես է եղել հայ ժողովրդին պատուհասած Մեծ եղեռնին եւ Զմյուռնիայի մեծ հրդեհին, եւ քանի որ գրելու բացառիկ տաղանդ է ունեցել նա, հեղինակել է չորս գիրք: Բացի վերոնշյալից գրել է նաեւ «Դափնեպսակ», «Տաղ Մեծն Կյուրոսի» եւ «Վաղնջյան նվագներ եւ ներգաթք» խորագրերով հատորներ: Վախճանվել է 2001 թվին՝ շրջապատված ընտանիքի անդամներով:

«Տորյանի հուշագրությունը ընթերցել կնշանակի մուտք գործել Հայոց ցեղասպանության դաժան աշխարհն՝ իր սրտաճմլիկ գազանությամբ եւ չդադարող անարդարություններով», նշել է դոկտ. **Կառլա Կարապետյանը**՝ «Հայկական ֆիլմերի հիմնադրամից»:

«Միրորի» հաղորդագրության կարեւորությունը ընդգծելու համար նշեմ, որ գիրքը, ավելի ճիշտ՝ գրքի անգլերեն լեզվով լույս ընծայումը, իմ կարծիքով, անհրաժեշտ ներդրում է տվյալ բնագավառի գրականության մեջ:

Չնայած հավանաբար տարբեր պատմաբաններ եղելությունը ներկայացրել են ըստ իրենց հայեցողության, այս մեկը առանձնանում է իր ականատեսի վկայություն լինելու հանգամանքով: Եթե նույնիսկ պաշտոնական որոշ արդարամիտ անձնավորություններ «մշտապես թուրքերի խորանը հանդիսացող ոճիր» համարեն Զմյուռնիայի հրկիզումը, կամ նշեն, որ «ափի մոտ դաշնակիցների նավերի առկայության պայմաններում թուրքերը ազատորեն հագեցնում էին կողոպուտի, սպանության եւ բռնաբարության իրեց ծարավը, քանի որ վստահ էին, որ նրանցից ոչ մեկը չի միջամտելու իրենց արարքներին», սակայն միեւնույն է, գտնվելու են մարդիկ, ընդ որում՝ ճանաչված գրողներ, որոնք շրջանցելով պատմական իրականությունը եւ անտեսելով դրդապատճառները, նյութը ներկայացնում են կողմնապահությամբ, երբեմն էլ նույնիսկ հատուկ շեշտելով հույների եւ մյուս փոքրամասնությունների «վայրագությունները»:



Ավելին որպես հաստատում բերեմ **Էռնեստ Հեմինգուեյի** օրինակը, չնայած նա իմ նախասիրած հեղինակներից է Ս. Մոեմից եւ Դ.Հ. Լոուրենսից հետո: Երիտասարդ Հեմինգուեյը, որն այդ ժամանակաշրջանում «Տորոնտո Սթարի» լրագրող էր իր «On the Quay at Smyrna» (Զմյուռնիայի նավամատույցում) կարճ պատմվածքը սկսում է հետեւյալ բառերով. «Տարօրինակն այն էր, ասաց նա, թե ինչպես էին նրանք ամեն օր կեսգիշերին բղավում: Չգիտեմ ինչու էին այդ ժամին նրանք գոռում: Մենք նավահանգստում էինք, եւ նրանք բոլորը նավամատույցում էին եւ կեսգիշերին սկսում էին բղավել: Մենք լուսարձակները նրանց վրա էինք պահում, որպեսզի լռեցնենք, եւ դա մեզ հաջողվում էր», եւ պատմվածքը ավարտում հետեւյալ պարբերությամբ. «Հույներն էլ լավ տղերք են: Տեղահանվելուց նրանք իրենց սեփական անասունների, որոնց չէին կարող տանել իրենց հետ, առջեւի թաթերը ջարդում էին եւ գցում ծանծաղուտ ջրերի մեջ: Այդ կոտրած թաթերով ջորիներին նրանք ծանծաղուտ ջրերի մեջ էին գցում: Այդ բոլորը հաճելի բիզնես էր: Այո, ազնիվ խոսք, շատ հաճելի բիզնես»:




Պատմվածքի սկզբում Հեմինգուեյը չի պարզաբանում, թե ով է ասողը (հավանաբար ամեն բանից իբր «անտեղյակ» բրիտանացի- Հ.Ծ.): Ոչ էլ պարզաբանում է, թե ինչու էին «գոռում» (հավանաբար, ավելի ճիշտ վստահաբար, նրանք (հույները, գուցե նաեւ հայերը- Հ.Ծ.) հուսահատված օգնության էին կանչում մերձակայքում գտնվող նավերի անձնակազմերին- Հ.Ծ.): Այս «մանրամասնությունները» Հեմինգուեյին չեն հետաքրքրում, հավանաբար հանուն իր հետագա կարիերայի: Նա սոսկ դեմքերն է նկարագրում եւ զարգացնում է իր ուրույն գրական ոճը: Նրա համար հույների կամ հայերի անխուսափելի ճակատագիրը «երկրորդական» կամ «լուսանցքային» նշանակություն ունի:

Կարճ պատմվածքները հատուկ ուշադրության արժանի են այն իմաստով, որ ներկայիս երիտասարդությունը, մեղմ ասած, այնքան էլ սովոր հատորներ կարդալու ցանկություն չունի, իսկ կարճ պատմվածքները դեռեւս ընդգրկված են ԲՈՒՀ-երի դասագրքերում, որոնցով դաստիարակվում են ուսանողները: Նրանց դասախոսների պարտականությունն է անաչառ լինել եւ «բացել փակագծերը» ցույց տալու համար պատմական ճշմարտությունը եւ սառցաբեկորի տեսանելի մասից խորասուզվել եւ բացահայտել նաեւ նրա անտեսանելի մասերը:

Ահա այստեղ է, որ Ալիս Տորյանի ականատեսի վկայությունները օգնության կարող են հասնել որպես անառարկելի փաստեր: Սա է գրքի անգլերեն թարգմանության արժանիքը:

# «Երազանքս Արցախ վերադառնալն է»

***«Ազգի» սեպտեմբերի 26-ի, հոկտեմբերի 3-ի համարներում ներկայացրել էինք Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանի հետ մեր զրույցը, որի եզրափակիչ մասը՝ ստորեւ:***

-Շվեյցարիա մեկնել չեմ կարող. վիզա է տրամադրում ՀՀ-ում Լեհաստանի դեսպանատունը, որ 070 նշմամբ անձնագիր ունեցողներին վիզա չի տրամադրում: Ֆրանսիայի, Գերմանիայի պարագայում նման խնդիր չունենք: Արեւելյան Եվրոպայի երկրները չեն տրամադրում՝ բացատրելով, որ ՀՀ իշխանությունները հայտարարել են, որ այդ անձնագիրը ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ չէ, ուստի չեն կարող տրամադրել մուտքի արտոնագիր: Բայց սա աբսուրդային բացատրություն է, քանի որ ԱՄՆ մեկնել կարող եմ, 10 տարով վիզա եմ ստացել: Ապրիլ- մայիսին եղել եմ Ավստրալիայում: Նախորդիվ եղել եմ Արգենտինայում:

**-Ինչու՞ չեք ուզում ստանալ ՀՀ քաղաքացիություն:**

- Դեռ այդ որոշումը չեմ կայացրել, ժամանակի հարց է: Սկզբունքային դրա դեմ ոչինչ չունեմ, միշտ ասել եմ, որ ի վերջո բոլորս ստանալու ենք ՀՀ քաղաքացիություն: Բացի մուտքի արտոնագիրը, կենսագործունեության այլ բնագավառում իմ 070 նշումով անձնագիրը խոչընդոտ չի հարուցել: Մեծ հաշվով անձնագիրը փոխելու, նորը ստանալու մոտիվացիա չեմ ունեցել: Արցախցիների որոշումն է՝ ընդունել կամ չընդունելը: Բացատրում եմ՝ եթե վերադարձի իրավունքի հետ կապված մտավախություն ունեք, կարող եք չմտահոգվել, որովհետեւ միջազգային իրավունքն այն համարում է բացարձակ եւ չի կապում այլ երկրի քաղաքացիություն ստանալու հանգամանքի հետ: Կարող ես ստանալ Ֆրանսիայի քաղաքացիություն, բայց պահպանես Արցախ վերադառնալու քո իրավունքը: Դա է իմ պատասխանը:

**-Մեր զրույցի հենց սկզբում դուք դժգոհեցիք թե՛ Հայաստանից, թե՛ Սփյուռքից:**

-Նախ՝ ոչ թե դժգոհեցի, այլ այսպես ձեւակերպեմ՝ իմ պատկերացումները Սփյուռքի մասին շատ ավելի բյուրեղային էին, քան այն, ինչ ցավոք տեսնում եմ տարբեր համայնքներ այցելելիս: Չեմ մեղադրում սփյուռքին, քանի որ հասկանում եմ, կա շատ մեծ հիասթափություն:

**-Ումի՞ց, ինչի՞ց:**

-Պարտությունից: Տարիներ ի վեր ապրել են Արցախ ունենալու գաղափարով, հիմա կորսված են: Միշտ ասում եմ՝ ժողովուրդ, ամենաառաջինը ես կարող եմ կոտրվել, որովհետեւ, եթե դուք գաղափարն եք կորցրել, ես կորցրել եմ այն տեղը, որի հետ իմ ամեն ինչն է կապված՝ տունը, տեղը, երազանքները:

**-Կորցրե՞լ եք ձեր երազանքները:**

-Օրեր են լինում՝ վերագտնում եմ երազանքներս, օրեր են լինում ` նորից կորցնում եմ:

**-Իսկ ո՞րն է հիմա ձեր երազանքը:**

-Վերադարձը:



**-Առաջ ի՞նչն էր: Անկա՞խ Արցախը, թե՞ ՀՀ- ին միանալը:**

-Ես կրթություն եմ ստացել Երեւանում, առնվազն 6 տարի հնարավորություն եմ ունեցել ապրել այստեղ: Հետո աշխատել Արցախում՝ միշտ նպատակ ունենալով, որ մեր վերջնանպատակը պետք է լինի մայր Հայաստանին միավորումը: Կարծում եմ կեղծ են այն բոլոր պնդումները, թե արցախցիները անկախ պետություն էին ուզում, այլ ոչ՝ միավորում: Սա չգիտեմ ո՞ր շրջանակներից եկած կեղծ պնդում է: Արցախցին երբեւէ չի հրաժարվել մայր հայրենիքին վերամիավորման գաղափարից:

Շատ-շատերն են սփյուռքից ասում՝ լավ, ամեն ինչ ավարտված է, մնում ես այդտեղ ի՞նչ անես, քո պոտենցիալով ինչու՞ չես գալիս օրինակ ԱՄՆ:

**-120 հազար արցախցի մուտք գործե՞ց ՀՀ: Նրանցից քանի՞սն են ՀՀ-ում: Կա՞ վիճակագրություն:**

-Եթե խոսքը 2023 թվականին մուտք գործածների մասին է, 115 հազար է:

115 հազարից 16 հազարը լքել է, մեծ մասը ՌԴ է մեկնել՝ աշխատանքի, ավելի լավ սոցիալական պայմանների համար:

**- Դա կորա՞ծ զանգված է:**

-Չեմ կարծում: Կորած զանգված են ԱՄՆ, Եվրոպա մեկնածները, որոնց, ցավոք սրտի, հետ բերելն անհնար է լինելու: Կա ծրագիր Հունգարիա տանելու: Տեղահանված ընտանիքներին տեղափոխում են, մեկ տարով ամբողջական ապահովում:

**-Քանի՞ հոգի է օգտվել այդ ծրագրից:**

-Եթե չեմ սխալվում, տարվա վերջում իրենց պլաններով պիտի 300- ի հասցնեին: Վստահ չեմ՝ 300 հոգի են, թե՞ 300 ընտանիք:

**-Հունգարիա գնում են վստահելո՞վ Հունգարիայի այն իշխանություններին, որ Ռամիլ Սաֆարովին արտահանձնեցին Ալիեւին:**

- Իմ տեղեկություններով, ծրագիրն իրականացնում է քրիստոնեական կազմակերպությունը, շահագրգիռ լինելով, որ Հունգարիայում ավելանա քրիստոնյաների թիվը:

⇨7

# Հալվա - հալվա ասելով բերանը չի քաղցրանում

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ



Հայաստանյան մերօրյա միջավայրը եռացող կաթսա է հիշեցնում, որի մեջ ով ինչ ասես լցնում է: Մեկն իր արածը ռուսական «բորշ»-ի է նմանեցնում, երկրորդը՝ եվրոպական գյուլաշի, երրորդը՝ թուրքա-արաբական աջափսանդալի, մի խոսքով՝ իսկական կեր ու սուս, կամ՝ շիլաշփոթ: Տպավորություն է ստեղծվում, որ յուրաքանչյուրն իր տեղում ճիշտ է, թեեւ վերջնական արդյունքում ստեղծվում է կաթսայի հատակին այրված մի զանգված, որի առաջ բոլորն են գլխահակ կանգնած:

Դե եթե մարսողությանը տիտանի բան չկա, պետք է փորձել մեղավորներ փնտրել: Չմանրանամ, քանզի այն մեզ ոչ մի տեղ չի տանում, ընդամենը հայտնվում ենք մի կետում, ուր անորոշությունները եթե չեն բազմանում, նվազագույնը կրկնապատկվում են: Տեսեք. ընդամենը օրեր առաջ ում մտքով կանցներ, թող որ ՀՀ պետական խորհրդանիշների վրայից, հանել մեր սրբություն սրբոց Մասիս ու Սիս գագաթների պատկերները: Ըստ մեր ունեցած հիշողությունների, դրանք հայերիս գոյության իմաստն են, հազարամյա պատումների արձանագրումը, առաջ շարժվելու գրավականը, հավերժով ապրելու վճռականությունը: Ինչ-որ մեկի հընթացս արված մտավարժանքներն անկարող են այստեղ ծիլեր տալ, քանզի դրանք ընդամենը իմաստազրկումի երեւույթներ են, ավազի վրա տեղադրված վայրի տատասկներ: Արդյունքում, մերօրյա հայը մտորում է: 40-ամյա տարիքում բարձրագույն մասնագիտական կրթություն է ստացել ու նվազագույնը երկու օտար լեզուների է տիրապետում, ծնողներն իմաստնացած անձնավորություններ են, պակաս ուսյալ չեն մերձակա հարազատներն ու հարեւան-ծանոթները, համանման ուղիով են ընթացել արտերկրներ տեղափոխված քույր-եղբայրներն ու համադասարանցիները, ովքեր Հայաստանի կարոտը սրտներում՝ ապրում են ու... տնավորվում, չգայթակղելով գայթակղում: Ինչու է այսպես ստացվում, երբ ամենուր խոսում ու նշում են հայերիս աշխատասիրուց ու հնարամտությունից, համառությունից ու ելքեր փնտրելու ունակություններից, իսկ երեք միլիոնով առավել քան անօգնական ենք ու անճար: Լավ՝ մենք չէ, այլ՝ Հայաստանի Հանրապետության կյանքի ու տնտեսության համար պատասխանատուները, որոնք, ըստ հանրության որոշ թե որոշակի հատվածի, պատուհաս են դարձել հայության գլխին: 30 մլրդ դոլարի չհասած համախառն ներքին արդյունքով են հպարտանում, 6-7 մլրդ դոլար բյուջեով պարծենում, երբ աղքատ է յուրաքանչյուր չորրորդ հայաստանցին, գործազուրկ է աշխատունակ բնակչության մոտ 30 տոկոսը, աննախադեպ գնաճը սովորական երեւույթ է համարվում: Անճարությունը հասավ այնտեղ, որ երկրի պարենային ապահովության ու անվտանգության համար պատասխանատու բարձրագույն պաշտոնյա ՀՀ էկոնոմիկայի նախարարը հայտարարեց, որ երկրի բարեբեր վարելահողերում գյուղոլորտի թիվ 1 մշակաբույս ցորեն հացահատիկ աճեցնելը նպատակահարմար չէ: Սա ասում է մի մարդ, որ հարկատուներիս ֆինանսական միջոցներով վարձված մեկն է, մեզ բոլոր պարագաներում ծառայելու կոչված այր, պատճառաբանություններ ու արդարացումներ չհանդուրժելու կոչված համեստ կատարող:

Բա ո՛ւր է թե հայաստանաբնակներիս խնդիրներն ավարտվեին այս մեկ օրինակով: Յուրաքանչյուր պահի է ասվում ու խոսվում ինչ-ինչ խնդիրներից ու հոգսերիս, որոնց լուծումները պետք է որ թեթեւացնեն ու վերացնեն մեր, վարչապետական կարգավիճակ ունեցողներիս մտահոգությունները: Ավաղ, ոգեւորությունը շատ արագ մարում է, երբ այն պետք է որ արդյունքներ ցուցաբերի: Ամեն անառիթ առիթով է խոսվում մեր լավը չուզող Թուրքիայի հետ նրա կողմից փակված սահմանը բացելու եւ ամենատարբեր հարաբերությունները գործարկելու մասին: Առեւտրային կապերին նմանվող ինչ-ինչ նշաններ հիմա էլ կան, վրացական կողմերի միջնորդավորմամբ: Տեսեք ինչ թվեր են շրջանառվում առեւտրի ոլորտում. Թուրքական ապրանքներ Հայաստանում, 2024 թվականին՝ 330 մլն դոլարի, հայկական ապրանքներ Թուրքիայում՝ 30 մլն դոլարի: Ի՞նչ ժամկետում է հնարավոր այսօրինակ համամասնությունում տնտեսվարական ու տնտեսագիտական մրցակցություն ապահովել. նման հարցերի պարզաբանման ու բացահայտման վրա մեզանում արգելք է դրված: Փոխարենն ասենք Թուրքիայում գտան, որ 21-րդ դար իրենց ունեցած 46 տոկոս գյուղատնտեսությամբ զբաղվողներով անցում կատարելը ցանկալի վիճակ չի ապահովի եւ 2024-ին ունեին 17 տոկոս գյուղզբաղվածներ, երբ ՀՀ-ում ամեն ինչ է արվում ընդգրկվածների թիվն ավելացնելու ուղղությամբ, 33 տոկոսը 35-ի հասցնելու ջանքերն են բազմապատկվում: Արդյո՞ք տեղին ու տրամաբանված է այն մոտեցումը, ըստ որի սահմանապահը պետք է թիկունքին իր համերկրացու առկայությունը զգա: Սահմանապահը հարկ է որ իր զենք-զինամթերքի ուժը զգա, իր մարտական դիրքի անվտանգությունն ու անձեռնմխելիությունը:

Այն ապահովվում է ՀՀ օրենք հանդիսացող բյուջեով, որտեղ... թող ներվի ակտիվ լրագրությամբ զբաղվող ՀՀ քաղաքացուս, 33 տոկոս գյուղաբնակ տնտեսությունների ներդրումը ցանկալիից առավել համեստ է: Այն օրերս հաստատեց նաեւ վերոհիշյալ նախարարը, նշելով, որ Լարսի անցակետով երթեւեկող «Ֆուր»-երի գրեթե 99 տոկոսը «Սպայկա» ընկերության բեռներն են: Գյուղական համայնքներում հարազատ-բարեկամներ շատերս ունենք, նրանց առավել համեստ կենցաղից լավագույնս ենք տեղեկացված:

ՀՀ իշխանությունները լավատեսության ինչ-որ նախանշաններ են փնտրում օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ստորագրված, նախագահ Թրամփի միջնորդությամբ նախաստորագրված, խաղաղության ու բարգավաճման միջազգային ճանապարհի շահագործման հետ: Հաջողություն մաղթելով գործարքին, ՀՀ համեստ քաղաքացիս անկարող գտնվեցի հետեւյալ կարծիքս չհայտնելուց:

### Հռչակագիրը՝ փքաբլիթ

«08.08.2025-ի հայտնի «խոհարարները» մի փքաբլիթ են պատրաստել՝ առանց միջուկի: Ինչ համի կլինի այն, ցույց կտա ժամանակը»:

Երրորդ ամիսն է ընթանում, նշմարելի ոչինչ կարծես չի նկատվում: Իսկ իշխանությունները խոսում են, խոսում, խոսում... մարդիկ էլ ակամա հիշում են հալվա-հալվա ասելով բերանը չի քաղցրանում առացվածքը:

Ահա այսպիսի բաներ:

# «Երազանքս Արցախ վերադարձն է»

⇨1

**-Հայերը շատ վաղուց են հաստատվել Հունգարիայում, խոսքը նրանց մասին չէ: Արցախցին չունի՞ այն հիշողությունը, որ ի վերջո այս վայրում էր, որ սպա Գուրգեն Մարգարյանին գլխատեց Ռամիլ Սաֆարովը, Ալիեւը գնեց նրան Հունգարիայի վարչապետ Օրբանից, որն այսօր էլ պաշտոնավարում է: Չունե՞նք հիշողություն, երդում, որ այդ երկրում չենք կարող հանգիստ գտնել, մանավանդ Հունգարիան ներում չի հայցել ՀՀ-ից, մեր ժողովրդից:**

-Անհատական որոշման հարց է, չեմ կարծում, թե այնտեղ տեղափոխվողները դրա մասին չեն հիշում, երեւի ավելի թեթեւ կյանքի հետեւից են գնում:

**-Իրավունք ունե՞նք այդպես ապրելու:**

-Եթե գտնեի, որ դա է ճիշտ ապրելաձեւը, միգուցե ես էլ մի տեղ գնայի, բայց քանի դեռ մնում եւ պայքարում եմ, նշանակում է, որ ես այդ արժեքի կրող չեմ: Բոլորը մեծ-մեծ խոսում են: «Արցախ, Արցախ» են ասում, բայց իրական հողի վրա որեւէ մեկն աջակցություն չի ցուցաբերում: Կազմել եմ ծրագրեր, դիմել տարբեր հիմնադրամների, շահագրգռված չեն:

**-Հայաստանյան ընդդիմությունն ի՞նչ է անում, օգնո՞ւմ է ֆինանսապես:**

Ես չգիտեմ:

**-Նախկին երկու նախագահներն ի՞նչ են անում: Իրենց գրպանը բա՞ց են անում ձեր կարիքների համար:**

-Ճիշտ եք ասում: Առաջինն իրենք պիտի շահագրգիռ լինեին: Ոչ միայն իրենք, այլեւ ծագումով արցախցի գործարարներ ոչ միայն ՀՀ-ում, այլ նաեւ դրսում: Չեմ տեսնում նրանց ակտիվությունը: Կարծես թե Արցախի գաղափարը պահպանելու բեռը մնացել է մի քանի հոգու ուսերին: Չեմ կաշկանդվում դրա մասին խոսել: «Արցախ» հեռուստաընկերությունն էլ ԼՂ ներկայացուցչության այս շենքում: Մենք ի՞նչ գաղափար դրեցինք դրա մեջ՝ հնարավորինս հեռու պահել հայաստանյան ներքաղաքական գզվռտոցներից, Արցախի պահպանման, Արցախի պաշտպանության, արցախցիների խնդիրների մասին բարձրաձայնել: Հեռուստատեսությունը պահպանման խնդիր ունի: Արցախի ՄԻՊ գրասենյակը՝ թեկուզ փոքրացված կազմով նույնպես: Ինչո՞ւ պիտի այդպես լինի: Չէ՞ որ կարեւոր է պետական ինստիտուտներին աջակցությունը: ԼՂՀ ներկայացուցչության շենքում տեղակայված են՝ նախագահը, ԱԺ-ն, ՄԻՊ-ը , «Արցախ» հեռուստաընկերությունը: Եթե այս հաստատությունում 15 մշտական աշխատող լինի, վստահ եմ, թե՛ դրսում, թե՛ ներսում արցախցիների իրավունքների պաշտպանության առումով աշխատանքի արդյունքն ահռելի մեծ կլինի: Ոչ միայն պետական ինստիտուտներն են այդ խնդրի առջեւ: Եթե սփյուռքում կլինեն մարդիկ, որ կուզենան արցախյան ՀԿ-ներին հզորացնել, դրանով Արցախի ձայնը կհզորացնեն:

**-Ծագումով արցախցի պաշտոնյաներ կան, նրանցից է ԱԽ քարտուղարը: Ուշադի՞ր է ԼՂ ներկայացուցչության, արցախցիների հանդեպ:**

-Նա ուշադիր է անելու ամեն ինչ, որ փակվի Արցախի թեման: Բոլորն են ասում՝ նա մինչեւ 2018 -ը եւ դրանից հետո, շատ տարբեր է: Իրեն անձամբ չեմ ճանաչում:

**-Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը գալի՞ս են այստեղ:**

-Ոչ, իրենց երբեւէ այստեղ չեմ տեսել, ոչ էլ շփվել եմ: ՀՀ ԱԺ ընդդիմադիր պատգամավորներից շատերը կան, որ գալիս են:

**-ՔՊ-ից եկե՞լ են:**

-Ոչ: Անգամ «Հայաստան» դաշինքից, «Պատիվ ունեմ»-ից ոչ բոլորն են գալիս:

**-Եռաբլուրում բացվեց «Արցախի կանչը» հուշահամալիրը: Ճարտարապետի հղացքը ձեզ դո՞ւր է եկել, սփոփո՞ւմ է:**

-2 տարի լսում էինք, թե լացելու տեղ չունենք: Դա մի վայր է, որտեղ կարող են գնալ Արցախում գերեզմաններ թողած մարդիկ, նրանց համար որոշակի սփոփանք, մխիթարություն է, որ գոնե ծաղիկ դնելու, լալհանգստանալու տեղ կա: Բացման ժամանակ ծնողներից մեկն ասաց, որ հիմա գոնե տեղ ունենք լացելու: Եթե տեսել եք այդ հուշարձանը, Արցախի հետ կապված բոլոր սիմվոլներն իր մեջ ներառում է:

Ինձ տեղեկություն է հասել, որ գրությունն այլ էր, փոխվել է: Սկզբում որոշում կար «Արցախի կանչի» տակ գրել՝ « ձեր հոգիները մեզ տուն են կանչում»: Հետո փոխվել է գրությունը՝« ձեր հոգիները մեզ հետ են, մեր կողքին»: «Հոգիները տուն են կանչում»-ը միգուցե փոխվել է, որովհետեւ թույլ չեն տվել խոսել Վերադարձի մասին:

**-Գաղափարի իրականացումն անշուշտ ֆինանսներ է պահանջում եւ պատիվ է, որ այն ստանձնել է Արթուր Վանեցյանի ընտանիքը: Բայց նրա անունը հուշարձանի հեղինակների՝ ճարտարապետի, կառուցողի անուններից առաջ է փորագրված, կարծես շեշտադրելով միջոցը, դրամը: Երեւի պիտի հուշեին մեր նախնյաց ավանդույթը՝ վերջում գրել:**

-Եթե ես ֆինանսավորեի, իմ անունն ընդհանրապես չէի գրի: Բայց փաստն այն է, որ երկու տարվա ընթացքում նախաձեռնողականություն միայն ինքը դրսեւորեց:

Հարցազրույցը վարեց՝
ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

# Իմաստաբանական բառարան

## *Յոթնապատիկ խրողություններ*

**ՅՈԹ** տարի հետեւում չէ այն օրը, երբ համայն հայության համար ճակատագրական ընտրությունների արդյունքները կամփոփվեն:

Հունիսի **ՅՈԹ**-ը լինելու է վճռորոշ, քանզի արդյունքներից դժգոհ հատվածը **ՅՈԹ** անգամ զանգվածաբար անիծելու է իր բախտը: Չէ՞ որ երբեմն զանգվածաբար բախտ անիծելն էլ կարող է քաղաքական ակցիա համարվել, առայժմ՝ առանց քրեաիրավական հետեւանքների:

2026 թ. հունիսի **ՅՈԹ**-ին կայանալիք այս բախտորոշ խորհրդարանական ընտրություններին ՅՈԹ տարի սպասած հանրությունը, մինչ ընտրատեղամաս հասնելը, պետք է «**ՅՈԹ** անգամ չափի, մեկ անգամ կտրի»:

Ընտրությունների արդյունքներից գոհ մնացած զանգվածը, ինչպես ընդունված է ասել, «**ՅՈԹ** օր, **ՅՈԹ** գիշեր» տոնելու է իր հաղթանակը եւ իրեն զգալու է **ՅՈԹ**-երորդ երկնքում:

Համենայն դեպս, ինչպես արջը մեղրի մասին **ՅՈԹ** երգ գիտի, այնպես էլ քաղաքական դաշտում դիրքավորված բոլոր կուսակցությունների նախընտրելի **ՅՈԹ** երգը լինելու է **ՅՈԹ** վանկից բաղկացած այս մեղրածոր կարգախոսը՝

***«Պայ -քար, պայ -քար, մին -չեւ վերջ»***

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# «Գորգերը՝ պատմության լուռ վկաներ». ցուցահանդես Գյումրիում

Հոկտեմբերի 2-ին Գյումրիում բացվել է եւ մինչեւ 2026 թ. հունվարի 31-ը կգործի գորգագործական արվեստի յուրօրինակ ցուցահանդես: Սերգեյ Մերկուրովի տունթանգարանի սրահում ցուցադրվել են քաղաքի թանգարանային օջախների հավաքածուների մեկ եւ կես տասնյակից ավելի գորգեր ու կարպետներ, այդ թվում բացառիկ նմուշներ, որոնք 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարասկզբի գործեր են: Ամենահին նմուշը 1853 թվականի է:



Շիրակի երկրագիտական թանգարանը, որի պատմահնագիտական եւ ազգագրական հարուստ հավաքածուների պահման ու ցուցադրման համար նպաստավոր շենքային պայմաններ այդպես էլ չեն ստեղծվում, ներկայացրել է 9 գորգ, որոնցից 8-ը ցուցադրվում են առաջին անգամ: 6 ցուցանմուշ ներկայացված է «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի, 1-ը՝ Գյումրու ժողովրդական ճարտարապետության եւ քաղաքային կենցաղի թանգարանի ֆոնդերից: Ինչպես նկատվել է, սա թանգարանային օջախների համագործակցության լավ օրինակ է: Իսկ ցուցահանդեսն իր կարեւոր ճանաչողական նշանակությամբ, անշուշտ, ուղղված է նաեւ քաղաքում զբոսաշրջության խթանմանը:

Ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Շիրակում գորգագործությունը զարգացման որոշակի ավանդույթներ ունի: Գորգերն ու կարպետներն էլ այստեղ եղել են բնակարանային դիմագծի կարեւոր տարր: Այսօր դրանց գործածության զգալի նվազում կարելի է նկատել, որը, հույս ունենք, տեւական հեռանկարի առումով ժամանակավոր բնույթ կկրի:

Գյումրու համայնքային ցուցասրահում, «Կումայրի» արգելոց-թանգարանի կողմից հայ ավանդական գորգարվեստի ցուցահանդես էր կազմակերպվել նաեւ 2023 թ. սեպտեմբերին: Ներկայացվել էր ինչպես Շիրակի, Լոռու, Սյունիքի, այնպես էլ Արցախի, Ուտիքի, Վանանդի, Բասենի եւ Բագրեւանդի գորգարվեստի 30 նմուշ:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Իր 24-րդ թատերաշրջանը կբացի Մոսկվայի Հայկական թատրոնը

Հոկտեմբերի 11-ին, ռուս դասական Անտոն Չեխովի «Առաջարկություն+» զավեշտապատումի ներկայացմամբ իր 24-րդ թատերաշրջանը կբացի Մոսկվայի Հայկական թատրոնը: Մինչ այդ նրա ստեղծագործական խումբը օրերս է վառ տպավորություններով վերադարձել Հայաստանից, որտեղ գեղարվեստական ղեկավար Սլավա Ստեփանյանի գլխավորությամբ մասնակցել է «Թատերական Լոռի» 31-րդ միջազգային փառատոնին, ամսի 1-ին եւ 2-ին մեկական ներկայացմամբ հանդես գալով Վանաձորի եւ Ալավերդու թատրոնների բեմերում: «Շնորհակալություն հրաշալի ներկայացման եւ բարություն տարածելու համար»,- «Թատերական Լոռու» ֆեյսբուքյան էջում գրել են փառատոնի կազմակերպիչները:




Ռուսաստանի մայրաքաղաքի հայկական այս թատրոնի պատմությունը սկիզբ է առնում 1920-ական թվականներից, երբ կոմս Լազարյանների տանը գործում էր Հայկական դրամատիկական ստուդիան Սուրեն Խաչատուրովի ղեկավարությամբ: Նրա գործունեությունն ընդհատվել է 1952 թվականին՝ Լավրենտի Բերիայի որոշմամբ: Թատրոնի վերածնունդը տեղի է ունեցել 2002 թվականին՝ բեմադրիչ եւ դերասան, Սերգեյ Փարաջանովի աշակերտ **Սլավա Ստեփանյանի** ջանքերով:

Հայ, ռուս եւ այլ ազգերի դերասաններով համալրված թատերախումբը հիմնականում ռուսերեն եւ հայերեն ներկայացումներով անցած տարիներին բազում ստեղծագործական հաջողություններ է արձանագրել, արժանացել տարբեր թատերական փառատոների մրցանակների: Այս թատերաշրջանում պատրաստվում է երկու առաջնախաղ: Մեկը «Գեղեցկության սրահ» կատակերգությունն է, որի բեմադրությունը թատրոնի առաջատար դերասանուհի **Զիտա Բադալյանի** ռեժիսորական դեբյուտն է՝ լի գաղտնիքներով եւ կանացի անկեղծ զրույցներով՝ սիրո, բարեկամության, դավաճանության, երազանքների մասին: Մյուսը «Անծանոթը», ներկայացում է Ստեֆան Ցվայգի պատմվածքների հիման վրա ստեղծված դրամատիկ սիրային տեսարաններով, ռեժիսոր՝ **Նիկա Կվիժինաձե**:

Թատրոնը նախատեսում է ակտիվ շրջագայությունների ծրագիր: Այս տարի «Թատերական Լոռիից» բացի ելույթ կունենան նաեւ Օրյոլում կայանալիք «Ռուսական դասականներ» փառատոնում, հանդես կգան Մոսկվայի մարզի տարբեր քաղաքների հանդիսատեսի առջեւ:

Գ. Ս.

# Ինը համերգ՝ Վահագն Ստամբոլցյանի անվ. երգեհոնային երաժշտության III միջազգային փառատոնին

⇨5

**Կոմիտասի** «Օրհնյալ է Աստված»-ը, «Գովեա Երուսաղեմ»-ը, «Յայս յարկ»-ը (վերջինը՝ Ա. Հարությունյանի փոխադրությամբ), «Շուշիկի»-ն եւ «Օրոր»-ը երգեհոնի հնչողությամբ մի այլ խորհուրդ էին ստանում: Առանձնակի տպավորիչ էր, երբ երգեհոնին միանում էին այլ նվագարաններ: Կոմիտասի «Մխ մարալ ջան» եւ «Էրվում եմ» ժողովրդա-ավանդական հնչողությամբ երգերը չափազանց սրտահույզ կատարեցին բլուլահար **Համիկ Մուրադյան-Հարությունյանը** եւ երգեհոնահար Թերեզա Ոսկանյանը: Ալան Հովհաննեսի «Սուրբ Գրիգորի աղոթքը» երաժշտական երկը կատարելիս՝ վերջինիս միացավ շեփորահար **Արմեն Մայիլյանը**:




Հիշատակեմ երաժիշտների եւս մի զույգի կատարումները: Կոմիտասի «Հով արեք»-ը եւ «Շողեր ջան»-ը հնչեցրին հայր եւ որդի՝ երգեհոնահար Արմեն Աղաջանյանը եւ երիտասարդ թավջութակահար **Անդրանիկ Աղաջանյանը**:

Համերգային երեկոյին կատարվեցին նաեւ Ներսես Շնորհալու, Սիմեոն Երեւանցու, Մակար Եկմալյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Առնո Բաբաջանյանի, Մարի Պողպատյանի, Ստեփան Շաքարյանի երկերը:

Վ. Ստամբոլցյանի անվ. երգեհոնային III փառատոնին վերոնշյալ երգեհոնահարներից բացի հարուստ ծրագրերով կբեմեն նաեւ **Աննա Բակունցը, Լուսինե Սառաջյանը, Կարինե Հովհաննիսյանը, Հովհաննես Մանուկյանը, Վահագն Մարգարյանը, Մարինա Նահապետյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Աննա Առուստամյանը, Նելլի Սահակյանը**, այլք: Հանդես կգան արտերկրից չորս հրավիրյալ երաժիշտներ՝ Փարիզի Աստվածամոր տաճարի տիտղոսակիր երգեհոնահար **Վենսան Դյուբուան**, Բարսելոնի Սագրադա Ֆամիլիա բազիլիկի գլխավոր երգեհոնահար **Խուան դե լա Ռուբիան**, բրիտանացի երգեհոնահար **Ջոնաթան Սքոթը** եւ Ռոտերդամի քաղաքային երգեհոնահար **Ադրիան Հոեկը**: Նրանք կանցկացնեն նաեւ վարպետության դասեր:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԷՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թէքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 09.10.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: